



Հ.Յ.Ղ. ԲՆԻՐՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Address: 23, rue de la République
Redaction du Journal
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Դ Ա Ր Ա Ի Ո Ր Պ Ա Յ Ք Ա Ր Ը

Զարհուրանք ու հսկայական խելագարութիւն. ահա թէ ինչով կարելի է բնորոշել Կովկասի ներկայ կացութիւնը: Արքան և հեռու լինինք աղբայնական նեղսրտութիւնից, ինչքան և նողկալի լինի մեզ համար կըշտամբանք չպրտել մի ցեղի երեսին, այնուամենայնիս ստիպած ենք տիրութեամբ, սրտի խորին ցաւով արձանագրել, որ ամիսներից ի վեր Կովկասի մի ծայրից միւսը յեղյեղող սոսկումները անհասանելի գործ չեն, այլ մի ամբողջ ժողովուրդի, յատկապէս թաթարական ժողովուրդի: Կատաղի ու արիւնարբու՝ նա մի օր, մոռացութեան արժանի մի նշոված օր, դուրս սողաց դեղին անապատներից և դիակներ կրծելով խաղաց դէպի մեր երկիրը, ինչպէս աւազի հեղեղ...

Արքան քաղաքակրթութիւններ են մեռել այդ ժողովուրդի ծնած բունկալութեան ոտքերի տակ, այլևս երբեք չը բարձրանալու համար: Համամարդկային անհասանում է վոլիւնցիայի մէջ ազգերը աշխարհ են գայիս իրենց խօսքն ասելու, իրենց հանձարի գեղեցիկ թափը չափելու: Թաթարական ժողովուրդն էլ դարերից ի վեր իր մութ ուժերի արտայայտութիւնն է տալիս աշխարհին՝ աւերելով ու ոչնչացնելով այն բոլորը, ինչ մարդկային առաջադիմող միտքը երկնել է դարերի երկունքով, ինչ նրա հոգին ստեղծել է իր հոյակապ թուխքներով:

Զարհուրելի անցեալ ունի այդ խաւար ու դժբախտ ժողովուրդն իր թիկունքին: Թէմուրլէնգներն ու Չինգիզները մորթուած երեսանների արիւնով են լողացել և իրանց արհաւիրի փառքը յաւերժացնելու համար մարդկային գանգերից կոթողներ կանգնեցրել: Բիւստաբար այդ անցեալը անդարձ համարեցինք, բայց Կովկասեան թիւրքերը չուզեցան մոռանալ իրենց «մեծ» հայրերի այդ «սիրագործութիւնները»... այլ կերպ ինչպէս բացատրել, որ նրանք դեռ սիրում են իրենց ձեռքով յօշոտած երեսանների փորոտիքը շներին ձգել, ինչպէս Մինքեհում, և յղի կանանց արգանդը ձեղքել վայելելու համար գոյ արեան հրէշաւոր հաճոյքը, ինչպէս Բագում:

Անբեկայ ենք սակայն, որ այն օրը, երբ նրա պապապ սերունդները կ'ապաւեն հայրերի արիւնածարաւ բնազդներից, դարերի կտակած գազրելի ատավիզից, կը նրանք ներկայ խաւարից ու քարշանքից կը բարձրանան մինչև մարդկայնութիւնը, զայրոյթով ու ամօթով կը հրաժարին այդ ստորացուցիչ, այդ անփառունակ ու ոճիրներով հարուստ անցեալից: Երբեկեց կը գայ այդ օրը, անկասկած պիտի գայ, և ոչ ոք այնպէս կարող չէ նրա գալստեանը, այնպէս նախանձանդիր

չէ թաթար ցեղի կուլտուրական առաջադիմութեանը, որպէս հայ ժողովուրդը:

Եւ դա առանց խորունկ պատճառների չէ: Մի անօրինակ ճակատագիր կամեցաւ, որ հայ ժողովուրդը, Արևելքի ժայռին մեխած այդ Պրոմէթէոսը, իր չարատանջ թիկունքին կրի ասիական խուժանների բոլոր հարւածները, որ յունական իդէալի և ասիական վայրենի ցեղերի գազանային բնազդների միջև մղող հսկայական մենամարտը Պելոպոնէսից անցնի և հայկական բարձունքների վրայ յեղեղի ամբողջ դարեր: Հոյակապ ու անհասարկ հուշ, որի վախճանը դժար է կանխատեսել: Ապագան կ'ասի, թէ ո՞վ պիտի յաղթանակի. արդեօք փոքրիկ հայ ժողովուրդը, որ յամառ ու անյողգորդ շարունակում է իր քաղաքակրթական ծանր միասնան, թէ՞ բազմամիլիոն խաւար ոյժերը, որոնք նոյնպիսի յամառութեամբ շարունակում են ըմբոստ մնալ քաղաքակրթական հասկացողութիւնների, լայն համամարդկային գաղափարների՝ հանդէպ: Եւ դարեր շարունակ ստեղծագործելու, առաջադիմելու մեր ճիգերը բաղխեցին մեզ շրջապատող խուժաբուժ ցեղերի անսանձ ու վայրենի կրքերին, բաղխեցին ու խորտակեցին: Ահա ծագումը մեր անհասանում տառապանքի, ահա աղբիւրը պատմական չարիքի, որ մեր գլխին ծանրացաւ: Զարհուրելի է մտածել: Ո՞վ կարող է երբեկեց հաշի առնել մեր տւած բոլոր զոհերը, ո՞վ կարող է չափել մեր կսկծի խորութիւնը անթիւ յուսախաբութիւնների հանդէպ, երբ մեր եռանդը, մեր աշխատանքը վատնել է, որպէս մորիկների ցանած փոշի: Մեր իրական պատմութիւնը անցեալի մեծ լուսութեան գրքի մէջ է, ոչ ոք, ոչ ոք չի կարողացել այն և չի կարողայ երբեք:

Ահաւոր դիւրամայի առաջ ենք կանգնած այժմ: Բազուկներս բարձրացնում ենք վարանելով զարկում ենք անփոստելով և նզովում ենք մեր հարւածը, երբ նա յաջող է, որովհետև կ'ուզէինք ոչ թէ աւերել, ոչնչացնել, այլ կրթել, բարձրացնել, առաջ տանել. և երբ մեզ են հարւածում, բուռնցքը միշտ անողորմ է և ուժգին, մենք դարձեալ նզովում ենք այդ անփոստ հարւածը և մեր հոգու խորքում լալիս այն բութ, ոճրագործ անգիտակցութիւնը, որ անկարող է ըմբռնել մեր հոգին, մեր տենչերը, մեր գաղափարական վսեմ թրուխճները: Մենք ե՞րբ ենք ասել և ո՞վ:

Եւ արտասուելի է մտածել, որ մեզ վիճակած այս անօրինակ ճակատագիրը մինչև վերջին ծանր փորձութիւնները՝ չը դարձաւ մեզ համար քաղաքական իմաստութեան աղբիւր, չը սովորեցրեց մեզ այն, ինչ ամենասովորական կենդանիներին ասում է ինքնապաշտպանութեան բնազդը գոյութեան անողորմ կուրի մէջ: Տառապեցինք, անթիւ անարդարութիւններ ու զրկանք-

ներ կրեցինք աշխարհում և մնացինք միշտ լաւատես մեզ շքապատող կասկածելի հարւանների վերաբերմամբ, սիրեցինք պատրանքները, ինքնախաբէութիւնը և մեզ բարաբարկութեան ճիգերի ամենագեղեցիկ արտասայտութիւնները այսպիսով ծնած օրից սիզիֆեան աշխատանքներ եղան: Գայլերի և բորենիների մէջ մենք առանց ժանիքների աշխարհ եկանք, և արիւնարբու, աւաղակաբարոյ հարւանների կողքին ամբողջ դարեր բաւականացանք միայն բարին երազելով. պատմութեան անողորմ դասերը մեզ համար պառաւ տատերի հէքիաթներ եղան այն ժամանակ, երբ մեր շոր կողմում աւերիչ ուժերը ատամներով դանակ էին սրում: Մասսայօրէն չը պատրաստեցինք երբէք և մենակ թողինք յեղափոխական մարտիկներին...

Մենք միշտ կոյր ենք եղել:

Մի ժամանակ նենգաւոր Բիւզանդիոնն էր մեզ յանձնում բարբարոս Արեւելքին, թէև մենք միշտ նրա հովանին էինք փնտրում. այժմ էլ այդ պատմական ոճիրը յանձն է առել ցարերի դաւադիր, նենգ կառավարութիւնը, որի խելագար, արիւնարբու կատաղութիւնն անցաւ այն բողոքից, ինչ մենք երբեք տեսել ենք մեր սև պատմութեան ընթացքում: Ասկածն անմտութիւն է: Յարիզմը մեզ կտորել տւեց թիւրքիայում, դարձեալ նա՛ է, որ ոտքի է հանել, մեր դէմ Արվկասի թաթարներին: Այս էլ սպիտակ ցարերի հովանին, որ փնտրեցինք, մուսացինք և երջանիկ էինք, երբ նա մեր գլխին տարածել:

Չարհուրելի կացութեան վախճանն ո՛ր է. երբ պիտի ազատենք զանպան «հզօր հովանիներից», որոնց տակ խեղդւում ենք:

Հայկական մանուկ յեղափոխութիւնը, որ իր հպարտ ճակատին կրում է առաջնորդող աստղը բոսորային ճանճներով, միակ միջոց գիտէ—զինւած կռիւ, մինչև խորտակելի ոճիրներով յղփացած այս բէժիմը, մինչև որ անկարելի դառնայ որևէ անիրաւութիւն մեր դժբախտ աշխարհում: Այս միջոցի երեխայիքը մենք արդէն տեսնում ենք. տաս տարի առաջ թիւրքաց-Հայաստանից միայն ջարդերի ձայներ հասան աշխարհին, հայկական ջարդերի, իսկ այժմ... պատկերը փոխւած է, ամբողջ աշխարհի մասուրը տենդային եռանդով արձանագրում է «հայ-թիւրքական կռիւները»: Կռիւ և ոչ ջարդ. անպատիւ խայտառակ ջարդ. կռիւ և ոչ լացի, ու ողբի աղաղակներ, կռիւ և ոչ դանգատ, օգնութեան ճիւղեր:

Հսկայական թուխք է, հրաշք է այս: Որքան և տխրայի լինին կորուստները, որքան և անմիտ ուռւ կառավարութեան ձեռքով պատրաստւած և նրա հաճոյքի համար մղուող այդ արեւնահեղ ընթացքները, այնուամենայնիւ մի գերագոյն մխիթարութիւն է մտածել, որ երբ անգամ թւով աւելի մի վայրենի ցեղ, որին օգնում է մի ամբողջ կառավարութիւն իր զօրքով իր գաղտնի և յայտնի ագենտներով, այսօր հայ ժողովուրդի մարտական ուժը, նրա ռազմական կորովը, մարտնչող ոգին ստիպւած է հաշի առնել և յաճախ ընկճել նրա առաջ: Գուցէ հինուուրց արագեղիայի վերջին Գործողութիւնն է, ճնշող առեղծաճի լուծումն է այս:

Պատմական նշանակալից ու խորհրդաւոր մօմենտ է: Գոնէ այժմ լռեն բողոք փոքրօքի մտաւախները, ուղերձների և թափօրների ճաճուցները, որոնց պատաս-

խանը եղել է միշտ թշնամու կրունկների և բուռնքի հարւածը. գոնէ այժմ լռեն կունչացող ագուանները, կարգի, հանգստութեան, անպատիւ խաղաղութեան տխուր ասպետները, որոնց թուլամութ բարոյների տակ միշտ ծածկւած է դարչելի «եւր», սեփական կաշի ամօթալի հոգսը:

Ժողովուրդների կենսունակութիւնը, նրանց գոյութեան իրաւունքը աշխարհը գտնում է բուռնքի ուժի և հարուածի թափի մեջ. տարաբախտաբար, ուրիշ չափ չը կայ, տակաւին, ով գիտէ, որքան ժամանակ է հարկաւոր, որպէս զի այլ աւելի գաղափարական, աւելի բարձր չափ գայ սահմանելու մարդկային իրաւունքը:

Իսկ մինչև այդ... լճու, լճու և յարգանք մարտնչողներին:

Բ Ո Ղ Ո Ք Ի Ա Ր Գ Ի Ի Ն Բ Ը

Հ ա յ ժ ո Ղ ո Վ ո Ւ ր Գ Է

Հեռագիրը հաղորդեց, որ բարձրագոյն հրամանով վերադարձնում են հայ եկեղեցւոյ յափշտակած կալուածները. նոյն բարձրագոյն հրամանով վերաբացւում են և հայ-ժխական ուսումնարանները, 1874 թւին հաստատւած ծրարով:

Ի՞նչ պատահեց: «Թագաւոր-կայսր բարեհաճեց զինանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին և կովկասեան փոխարքայի միջնորդութեանը», — տեղեկացւում է մեզ հեռագիրը: Տարիներ առաջ թագաւոր կայսր բարեհաճեց փակել հայոց ուսումնարանները, և որովհետև շատ ուսումնարաններում երեխաները, խմբւած դասատուների մէջ, չէին ցանկանում դուրս գալ թագաւոր-կայսր բարեհաճեց ներմիջ իր կողմնակիցին պիտի տալ երեխաներին նստարանները, նազայիւններով վռնուել ուսումնարաններից: Երկու տարի առաջ թագաւոր-կայսր բարեհաճեց դրաւել հայ եկեղեցւոյ դարւոր սեփականութիւնը, և որովհետև հայերը փակեցին կայսերական պաշտօնատաների առաջ եկեղեցւոյ դուռները, թագաւոր-կայսր բարեհաճեց հրամայել իր կողմնակիցին գնդակահարել այդ մարդկանց: Այսօր նոյն թագաւոր-կայսր բարեհաճեց և վերաբանուել ուսումնարանները և վերադարձնել եկեղեցւոյն սեփականութիւնը:

Սա ի՞նչ տարօրինակ, ասլէյնող բարեհաճումներ են. «Հայոց կաթողիկոսը աղերսեց, Կոմս Ա՛րմնոյով-Գաշիօլը միջնորդեց և ա՛հա թագաւոր կայսր բարեհաճեց» — բացատրում են մեզ:

Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում որանից սասն և հինգ տարի առաջ, երբ հազարաւոր երեխաներ թագաւոր-կայսր բարեհաճութեամբ՝ ուսումնարաններից փախը շարուեցին, և ի՞նչու այն ժամանակ կովկասեան կառավարչապետը միջնորդ չը հանդիսացաւ կաթողիկոսի աղերսանքների և կայսերական բարեհաճութեան միջև կամ ի՞նչու թագաւոր-կայսր այն օրւայ բարեհաճումը: «այնքան անբարեհաճ եղաւ Հրա՛ջը կառայրեց արդեօք: Արդե՛ք թագաւոր-կայսր բարձրագոյն սիրտը յանկարծ գլթով և սիրով վաւեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիւթական ուժ ստացան, որ առաջ չուենին. թէ կայսերական ծառայութեան մէջ ծերայցած Կոմս Ա՛րմնոյով-Գաշիօլը յանկարծ իրաւունքի և արդարութեան ասպետի՞ վերափոխեց:

Ոչ, կատարեց մի այլ բան, — ժ ո Ղ ո Վ ո Ւ ր Գ Է Բ ո Ղ Ո Ք Է Կ Է: Ի՞նչ է — տղը մի բաւել մէջ պէտքէ որանել գաղտնիքը:

Հայ ժողովուրդը յոյց տւեց, որ նա ընդունակ է գիտակցել — ոչ միայն գիտակցել, այլ և ցանկանալ — ոչ միայն ցանկանալ, այլ և պահանջել: Եւ հրա՛ջը ինքնուրոտիքեան կատարեց. կաթողիկոսի աղերսանքները յանկարծ մի անսովոր ուժ ստացան, պաշտօնական միջամտութիւնը անհրաժեշտ դարձաւ, իսկ բարձրագոյն «բարեհաճումը» վայրկեանապէս փոխեց իր կերպարանքը:

Երբ տարիներ առաջ թագաւոր-կայսր, «բարեհաճեց» գնել իր «խնամակալ» թաթար մեր ուսումնարանների վրայ,

նա դատու այնտեղ միմիայն երեխաներ—աղայք և աղջիկներ, որոնց միակ զենքը—արտասուքն էր: Բայց տարիներ անցան, երեխաները մեծացան, տղամարդիկ դարձան: Առումնարանների բակերում սերմանած երեխաների մաքուր արտասուքները եկեղեցիների. գաւիթներում արձեճ—զնգալներ դարձան, մանկական աղետը մտայնորէր այրական զայրոյթի փոխակց:

—Խնայեցէք մեզ, աղբւրում էին այն ժամանակ երեխաները, ուսումնարաններում իրենց նստարանները գրկած: —Մէք յանդգնիլ մօտենալ սպառնացին այժմ՝ տղամարդիկ, եկեղեցիների շէմքերը բռնած:—Մի՛ խէք, լալիս էին այն ժամանակ երեխաները:—Չէ՛նք տայ, դաչեցին այժմ տղամարդիկ և այդ սուրբ չէնք տայ:— Իրենց արիւնով գրոշմեցին:

Սա է պարզ իրողութիւնը: Ո՛ւժ ենք պարտական մենք, ո՛ւժ պիտի բերենք մեր շնորհատուները, ո՛ւժ պիտի սուղենք մեր երախտագիտութեան զգացմունքները:

Քե՛զ, հայ ժողովուրդ, և միայն Քեզ: Գու էիր, որ պաշտպան կանգնեցիր Քո նւիրական իրաւունքներին, Գու քաջութիւն ունեցար չը հնազանդւել դահիճ կայսեր բարձրագոյն «բարեհաճման», Գու Քո արիւնով բողբեցիր բռնութեան դէմ և տարար յաղթութիւնը:

Հ. Յ. Գ.

Կովկաս IV ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

ՈՒՐՈՉԲԱՐՈՎ

Հայ փախստակամերիւմ...

Ո՛ր ես շտապում, հայ փախստական, ո՛ւր ոչ բարով: Գու, որ քո ծով համբերութեամբ կրեցիր գերբնական սարսափները. որ անխռով տարար լէնկ-թէմուրների, Ձինգիղ-խաների չարչարանքները. որ զարմացրիր ամբողջ աշխարհը քո անյողդողդ կամբով՝ պատրաստ կրելու ձախտագրական խաչ դ մինչև Գողգոթայի կատարը. ի՛նչ պատահեց քեզ, ասա, ո՛ւր թողեր քո երկաթէ կամքը, քո ցեղի այդ երկնատուր առաքինութիւնը:

Տես, կի՛նդ ուժասպառ՝ էլ չի կարողանում հետևել քեզ: Նա դժարանում է փոխել իր ոտքը. նա երկունքի մէջ է: Փոքրիկ զաւակդ կպել է մայրենի հողին, չի ուզում բաժանել նրանից. հողը բռնել է նրան գուրգուրանքով, քաշում է դէպի իր ծոցը. իսկ դու շտապում ես, փախում վատօրէն:

Ասա, ո՞ր խաբուսիկ պատրանքներն են քեզ քշում քո հարազատ աշխարհից. ո՞ր չար ոգին է առաջնորդում քեզ դէպի մուսլ անյայտութիւն, ուր գնում ես կորցնելու քեզ, քո ընտանիքը:

Գրւելդ կորցրած, դու չես տեսնում, թէ ինչպէս քեզ առաջնորդող չար ոգին իր դիւային քրքիջով աշխարհ է բռնել. թէ ինչպէս նա իր հոհոցով աւետում է բոլոր թշնամիներդ, որ վերջապէս յաջողեց քեզ կտրել քո մարմնի հողից և ձգել կորուստի ճանապարհը: Այն ոգին, որ դարեր առաջ կարողացաւ քեզանից խել քո անթիւ հարազատները և քշել դէպի լեհաստանի,

Ռուսմանիայի ու Հնդկաստանի ծոցը՝ իրենց հայրենիքը ուրացնել տալու համար:

Արդեօք մոռացար այդ կորուստը, որ ողբաց ու ողբում է մինչև այսօր հայ աշխարհը, որ ողբում էիր դու և երէկ: Իսկ հիմա՞: Ի՛նչպէս չը սարսափեցիր ընդունելու կորստանդ բաժակը, որ թոյն է ամբողջովին, որ գալիս է մեռցնելու կեանքիդ ողջ քաղցրութիւնը, կտրելու քեզ այն ամենից, ինչ որ նւիրական, ինչ որ սուրբ է քեզ համար, կորուստու և ստեղծագործող...

Ի՛նչ սրտով թողեցիր քո հասած արտը, որի հասկերը գլխիկոր ողբում են իրենց անտերութիւնը, քո այգին, պարտեզը, քեզ սիրող լեռներն ու ձորերը, որոնց խորքերում դեռ արձագանքում են քո ժրաջան լծկանների վերջին բառաչները:

Ասա, ի՛նչ լողձով ոտքի տակ տւիր այն բոլոր զգացմունքները, որոնք այնչափ գորովով քո մէջ մտցնել ջանացին քո Սբաւոր Հայրենիքի ջերմ պաշտպանները՝ սկսած Վարդանից մինչև Պետօններն ու Բաբկէները:

Գու չը վարանեցիր ուրանալ քո եղբայրներին, որոնք անսալով գոյութեան կուրծքին, անհաւասար մարտի մէջ կեանք են տալիս, կեանք առնում, որոնք շատ տեղ անհամեմատ փոքր թւով քո ցեղի առնականութեան օրինակներ են տալիս՝ թշնամու հրոսակները փախուստի մատնելով:

Գու չ'ուզեցիր գնահատել հայ կեանքի այդ վերածնութիւնը—կուրծքի, բողբոջի, արեան թափը— վաղուց մեր փնտրած ճանապարհը, որ մօտեցնում է մեզ ասուածային լոյսին:

Գու փակեցիր աչքերդ, որ չը տեսնես մօտեցող լոյսը: Գու խցեցիր քո ականջները չը լսելու համար այն ձայնը, որ խրոխտաբար քաջալերում է մեր մարտիկներին— կուրծքի ու կուրծքի չը լսելու համար միևնոյն ձայնը, որ բողբում է քո վատ փախուստի դէմ:

Գա ձայնը չէ այն չար ոգու, որից դու խաբւեցիր, այլ բարի ոգու, որ այսօր, աւելի քան երբէք, ուժ է զգում իր մէջ՝ բարձրացնելու հայի ռազմական կորովը, թէ ու թիկունք տալու ամենքին, ով որ գիտէ գնահատել կեանքը:

Գու չ'ուզեցիր անսալ այն ձայնին, որ միշտ կրկնում է, թէ քո գոյութիւնդ կարող ես յարատեւել միակ հարազատ երկրիդ ծոցում, թէկուզ նա լինի վտանգներով լի, բայց ոչ երբէք անվտանգ օտարութեան մէջ, ուր դու կորած ես իսպառ...

Վշտի, յուսահատութեան, նղովքի ճիչն է, որ լսում է քո սբաւոր հայրենիքի ամեն մի անկիւնից՝ քո սովորի փախուստի դէմ:

Հող ու ջուր, թուփ ու թուճ, հով, ծով, սար ու քար, Սիս, Մասիս մի բերան դառած՝ աղաղակում են քեզ. «Ո՛ւր ոչ բարով»... ՄԱՐ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱ ՀԵՂ ԸՆԳՀԱՆՐՈՒՄՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ (ՈՂԱՐԿԻՄԾ ԵՆՐՈԳԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԷՆ)

Թիֆլիս, 6 սեպտեմբերի

Անդրկովկասի վիճակը գտնում է սուխի սոլամակամ: Թիւրք խիւր, լու. գլխուժ, թալանիցիմ, քանդեցիմ և կրա-

կեցիմ Բուլախամիմ. հակառակ տններելի փաստերիմ՝ կուռալարութիւնը զինամալի չէ տնում մանուկական չարագործներիմ և ընդհակառակը մեղադրում է հույերիմ: Զօրքը անբախտեց Բուլախամիի հիւանդոսնոցը, ուր նայելը սովորեցի էլիմ՝ իմքնապաշտպանութեան համար: Ոտիկու-

նութիւնը դաւադրօրէն՝ շարունակում է զինամթափ անել հայերին: Բազւի նահանգապետի թուլութիւնը վրդովեցուցլւ է: Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ բաւակամանում է, հրկղիմի հեռագիրներ ուղարկելով:

Բագու, 6 սեպտեմբերի

Բազւի մէջ և շրջակայքում ոստիկանները միացած էին թիւրքերի հետ՝ զաղտնօրէն: Ոստիկանութիւնը լի է թիւրք սլաշտօնեաներով, որոնք ամենահու գործիք են մահմեդական խուժանի ղեկավարների ձեռքում: Բալախամիի, և Բիբիէյբաթի հայ բնակիչները զինամթափած՝ դիմում են դէպի քաղաք. թիւրքերը կրակեցին հայերին պատկանող հորերը և գործարանները: Հայերի վնասը անագին է: Թիւրքերը գործարանները շարունակում են բանել:

Շուշի, 6 սեպտեմբերի

Հայ-թիւրքական ընդհարումը կատարի էր: Հայերի թաղում մօտ 200 տուն է այրել: Կրակ տուղները թիւրքերն էին, որոնք գաղտնօրէն ներս խուժեցին խաղաղութիւնը կնքելուց յետոյ: Հայերից սպանւած են 35, վիրաւորւած 75: 3,000 զինուոր եկան քաղաք: Հայերը յաղթելով թիւրքերին, զրանցին Ասկերանի անցքը: Չամբգեղուի մէջ մահմեդականները սրբազան կոնի են յայտարարել, և պատրաստուում են ընդհանուր յարձակում գործելու: Երևանում իրարանցում կայ: Գամձակի վիճակը անհանգստացուցիչ է: Ուրիշ կէտերում ևս զրութիւնը ծամր է, շնորհիւ կառավարութեան անխիղճ արարքներին:

Թիֆլիս, 7 սեպտեմբերի

Համազգային սոսկալի արկած: Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչութիւնը ոտքի է կանգնել՝ կրօնական կոնի յայտարարելով քրիստոնեաներին: Բագու, Շուշի, Դերբենտ, ինչպէս և Չամբգեղուի, Չեբրախի և Ջվանշիրի գաւառներում թիւրք ամբարի խմբերը թալանում, քանդում, սպանում են: Ձօրքը, թուով քիչ, և անանց որոշ ղեկավարութեան, չէ կարողանում իր դերը կատարել: Հայ քաղաքներն և գիւղերը վտանգի մէջ են: Շուշու և Բազւի արհաւիրքները անմկարագրելի են:

Բագու սպանւած են անելի քան 1000, իսկ Շուշում՝ մօտ 900 թիւրք: Սպանւած հայերի թիւը համեմատաբար փոքր են, մինչև 300: Բայց հայերի նիւթական ու տնտեսական վնասը չափ չունի: Շուշի այրւած են մօտ 400 տուն: Մօտ 4000 շահեւձաններ եկել են Երասխի ափը և պատրաստուում են անցնել գետը ու ներս խուժել: Երկիրը կայ, որ Դաղստանի մահմեդականները ոտքի կը կանգնեն: Համիլամական շարժումը դարձել է անհանգստացուցիչ: Թիւրք ղեկավարները յամուրգ են դարձել, վստահ՝ որ ոստիկանութիւնը լնւրջ միջոցներ ձուլքէ ստանելու: Կացութիւնը ողբերգական է: Հայերը քաղաքայր կուում են, բայց գէնքի պակասութիւնը մեծ է:

Բագու, 11 սեպտեմբերի

Քաղաքում հաստատուած է զինուորական խաղաղութիւն: Գործ չանցողները վնասակը շատ լուրջ է: Թիւրքերի մտադրութիւնը պարզ է, նրանք ուզում են դուրս գցել հայերին հոսթորդիւնաբերական շրջանից: Նախագործների մեծամասնութիւնը չէ վստահանում, անանց հաստատ կրող-խուորութեան, վերականգնող աշխատանքները, ի բաց անցկով մի քանի կրօնական ֆիլմաներ և Նօբէլի ժառանգներին, սյո համագումարը ստաջ է քրիսի յամուր դասու-

կարգի մէջ սաստիկ զրգուում, ուստի շատ երկիրը կայ մոր բարդութիւնները:

ԲԱԳՈՒ, 18 սեպտեմբերի

Ձիւնած խաղաղութիւն է: Թիւրքերը ստանց զինուորների չեն համարձակուում հայոց թաղը մտնել, հայերը՝ թիւրքերի թաղը: Կառավարութիւնը անհամեմատ սուկի խիստ է դէպի հայերը, քան դէպի թիւրքերը: Մեջև այժմ թմուսութի է բռնել թիւրքերի տները միայն մէկը, մինչ հայերի՝ 7-ը: Ձիւնած հային խնդրն բռնում, զինամթափ են անում, իսկ բերդակներով զինւած թիւրք սամբոլը պտտում է մոյնիակ նահանգապետի բնակարանի առաջ: Կառավարական պաշտօնեաները սկսած, յետին «գօրօյօյից» մինչև կօզակների զեղապետը, կաշառւած են թիւրքերից:

Գրավւած է մեծ քանակութիւն գէնքերի: Երկու օր սուած Բալախամիի հիւանդանոցը խուզարկեցաւ, իսկ հրեկ մի ոռս աղակնի մատնութեամբ՝ «տիւնիկական նաղօրի» շինութիւնը գտել են մի քանի գէնքեր և ձեռքակալել են մի հայ երիտասարդ: Թիւրքերը շարունակում են զիշերով այրել հայերի տները. 25—30 տուն այրւած են: Սպանւածների և վիրաւորների թիւը դեռ փիշտ յայտնի չէ: հայերի կորուստը 80 է հաշւում, թիւրքերինը անհամեմատ սուկի:

ԲԱԳՈՒ, 19 սեպտեմբերի

Ձը մայած խաղաղութեան՝ հայերով բռնւած թաղերում մասնակի սպանութիւնները շարունակում են երկու կողմից: Աշխատողութիւնը բանորներին, անանց սօզուկնում խտրութեան՝ դուրս են ուղարկում:

ԲԱԳՈՒ, 22 սեպտեմբերի

Բռնւած են կարևոր մասնակներ և թղթեր, որոնք սուկացուցանում և հաստատում են մի մուսուլման կօմիտէի գոյութիւնը, որ կազմակերպել է Շուշու և Բագուի խտրականութիւնները: Հակառակ կառավարութեան պնդումներին, նախարարութեանը հրաժարուում են վերականգնող աշխատանքները, անանց դրական երաշխաւորութեան:

Բ Ա Գ Ւ Ի Ա Ղ Ե Տ Ի Ս Կ Ի Զ Բ Ը

Բագու, 22 օգոստոսի

Հտապում եմ մի բանի տեղեկութիւններ հաղորդել ձեզ կրկին սկսած խառնակութիւնների և կոտորածի մասին: Ղարաբաղում կատարւած դէպքերը, մանաւանդ Շուշուց ստացւած ըւերերը, այստեղի թիւրքերին սկսել էին խիստ գրգռել: Վերջին օրերը անդադար ըլլեր էին սուկում, որ թիւրքերը թէ այստեղ և թէ Բալախամի անդադար ժողովներ էին անում և խորհրդակցում այն ձևերի մասին, թէ ինչպէս իրենց վրէժը անեն այստեղի հայերից՝ Շուշում կատարւած դէպքերի պատճառով: Թէ ինչ որոշումներ են կայացրել մեզ յայտնի չէ: Այդ միայն այժմ է կամաց-կամաց պարզուում: Խառնակութիւնները սկսելցին օգոստոսի 20-ին, ճաշից յետոյ, ժամը 4 1/2-ին. բայց թէ ինչ է եղել իսկական պատճառը — դեռ հնարաւորութիւն չենք ունեցել ստուգելու: Երայն դէպքերը սկսելուց 1—2 օր առաջ թիւրքերի վերաբերմունքը դէպի հայերը կասկածել չէին տալիս, որ պէտք էր սպանել նրանց կողմից յարձակման: Գնպքերից մի երկու օր առաջ հայերը դիմել են

զինւորական նահանգապետ Ֆադէէին և խնդրել որ խիստ միջոցներ ձեռք առնէ թիւրքերի դէմ, որովհետև շատ խռովայող նշաններ կային, որոնք ենթադրել էին տալիս, որ թիւրքերը պիտի սկսեն մի նոր աւերումն բազում: Ֆադէէի վը յայտնել է բացարձակապէս, որ երկու ժողովուրդներն էլ հանգիստ ու խաղաղ մնան, որ նա ոչ մէկին և ոչ միւսին խնայելու չէ և հրամայել է անխնայ կոտորել բոլորին, ով խռովութիւնների պատճառ կը դառնայ: Յայտնել էր նոյնպէս, որ զօրքերը քաղաքի բոլոր մասերում պահուած են և հարկ եղած լողէին դուրս կը գան դէպքերի տեղը՝ հինգ ընդհանրապէս: Լա իրաւ նա առաջին և երկրորդ օրը իր սասածը կատարեց. զինւորները անխնայ կերպով սկսեցին կոտորել ամենքին, ով ատրճանակ կամ հրացան էր բանեցնում, լինի հայ, թէ թիւրք: Հայերը համոզւելով, որ այս անգամ կառավարութիւնը նախկին դիրքը չը պիտի բռնէ— դադարեցրին թշնամական գործողութիւնները, թողնելով ամեն բան զինւորներին: Սակայն Ֆադէէի պէս չափազանց քիչ խելքի տէր մարդուն դժուար չէր թիւրքերին մոլորութեան մէջ ձգել:

II

Բազում, 23 դաստոսի

Օգոստոսի 20-ին, կէսօրից յետոյ, ժամի 4 1/2 այս տեղ անսպասելի կերպով ընդհարումն սկսեց հայերի և թիւրքերի միջև: Առիւը կատարել էր: Հրացանաձգութիւնը սարսափելի: Խօսոյն զօրքը միջամտեց և սկսեց անխտիր կերպով խփել թէ հայերին և թէ թիւրքերին, այսինքն նրանց, որոնք զենքով կուռում էին փողոցում: Այ կարելի էր դուրս գալ փողոց, ոչ էլ կանգնել պատուհանի մօտ: Ամբողջ գիշերը հրացանաձգութիւնը շարունակեց:

Օգոստոսի 21-ին ցերեկը քիչ հանգարտ էր, բայց գիշերը զօրքը սարսափելի կերպով կոտորում էր թիւրքերին, որոնք մօտիկ գիւղերից ահագին քանակութեամբ թափուել էին քաղաք, բոլորը զինուած: Հայերը շատ լաւ դիրք էին բռնել և կուռում էին քաղաքար: Վաշնակցութեան կենտ. զինւորական կօմիտէն շրջաբերականով կարգադրեց, որ վաշնակցական զինւորները առժամապէս չը մասնակցեն կուռին և սպասեն տեսնելու, թէ ինչ դիրք պիտի բռնէ կառավարութիւնը:

Առ այժմ զօրքն է գործում. զինւորները սաստիկ զրգուած են թիւրքերի դէմ: Այսօր թիֆլիսից սպասուում է դարձել 2000 զինուոր: Այս ընդհանրապէս քաղաքում 4500 զինուոր կայ:

Բոլոր գործարանները դադարեցրել են աշխատանքը: Բալխանիի նաւթահանքերում թիւրքերը մեծ հրդեհ առաջացրին: Ամբողջ Բալխանի բռնկւած է կրակով: Այրուած են բոլոր գործարանները: Քաղաքում դեռ թալան չը կայ. բայց Բալխանիի թալանը չափ չունիմ: Այնտեղ զօրք քիչ կայ. երևի այս անգամ կոտորածը շատ երկար կը տևի և սարսափելի դէպքեր տեղի կունենան:

Մինչև այժմ հայ սպանւածների թիւը 25-ից չի անցնում, այն էլ սպանուել են ոչ թէ թիւրքերի ձեռքով, այլ մեծ մասը զինւորների գնդակներից: Թիւրք սպանւածների մասին ճիշտ տեղեկութիւն չունենք, բայց գիտենք, որ մի քանի հարիւրի է հասնում: Արէկ գիշերը թիւրք խուժանը փորձեց ներս խուժել քաղաքը և մեծ զոհեր տուց: Զօրքը անխնայ կոտորել է:

Հայ կուռողների տրամադրութիւնը լաւ է. բոլորը կազմ ու պատրաստ են: Մի հայ կին փողոցում կուռ սկսուած օրը մի թիւրք սպանեց:
Այրուած են և Բիբիէյբաթի նաւթահանքերը:

III

Բազում, 26 օգոստոսի

Բօմանիի շրջակայքում տեղի ունեցած դէպքերից յետոյ կողակները շրջապատեցին Մանթաշեանի, Փիթօյեանի և մի քանի ուրիշների նաւթահանքերը և առաջադրեցին հայ ազգաբնակչութեանը տեղափոխուել քաղաք իրենց պաշտպանութեան տակ: Բայց նախքան առաջնորդելը, բոլորից վերցրին զէնքերը:

Հրդեհելով ու աւերելով Բալխանին, թիւրքերը ասում են, որ յետ են խլում հայերից այն հողերը, որոնք երբեմն իրենց էին պատկանում և որ հայերը յափշտակել են... Երէկ ամբողջ գիշեր այրուում էին կասպեան ընկերութեան նաւթի ամբարները:

Բիբի-էյբաթում Մուստարովի գործարանի թիւրքերը—լաւ կազմակերպուած մի աւազակախումբ—յարձակում գործեցին Մանթաշեան ընկ. նաւթահանքի վրայ, բայց քիթները ջարդուելով յետ դարձան: Ապա միանալով գիւղի թիւրքերի հետ, աւերեցին խտրական և ընկ. պատկանող արհեստանոցը: Այդտեղ բաւական թւով հայեր վիրաւորեցին, մի քանիսն էլ սպանեցին:

Թիւրքերի գործած հսկայական շարիքների համար ամենամեծ պատասխանատուներն են՝ Աղայեփ, Թոփչիբաշեփ և ընկ. նրանք ամեն ջանք գործ են քնում, համոզելու նահանգապետ Ֆադէէիին, որ ամեն քանի հեղինակը հայերն են: Նզովեալ ոստիկանութիւնը, կաշառակեր անասունների այդ վոհմակը, ամեն բայափոխում արգելք է լինում մեզ և թիւրքերին նպաստում: Վոնէ չէզօք դիրք բռնէր, անաչառ աչքով նայեր թիւրքերին ու հայերին, այն ժամանակ երևան կը գար վերջինների ուժը: Ֆադէէի քանիցս յայտարարել է, որ հայերը հանգիստ մնան, մի հատ քնդակ չ'արձակեն և որ ինքը կը մաքառէ թիւրքերի դէմ:

Բալխանիում վառւած են մեծ մասամբ հայերի նաւթահանքերը. տուժել են օտարազգիներ, ևս. Նօբէլ Շիբայեփ և այլն: Բօմանիի մասում թիւրքերը գիշերով յարձակեցին Արասիլեկեանի, Փիթօյեանի ու Մանթաշեանի գործարանների վրայ: Տեղի է ունեցել շատ տաք կռիւ, որի միջոցին մեծ թւով թիւրքեր են կոտորուել հայերից՝ միայն երկուսը: Նոյնպիսի մի կռիւ տեղի է ունեցել Միրզոյեանների նաւթահանքի շրջանում, ուր թիւրքերը դարձեալ մեծ կորուստներ են տուել, հայերը՝ մի երկու հոգի: Յարձակում եղել է նաև Սովեալ Արէզգի շինութեան վրայ, Սարունչի գիւղում, ուր ծառայողների մեծ մասը հայ ու ռուս են: Չընայած իրենց ահագին բազմութեան, թիւրքերը փախուստ են տուել հանդիպելով ուժեղ դիմադրութեան: Այս բն հասել կօզակները, շրջապատել են շէնքը և առաջարկել հայերին զինաթափ լինել: Հայերն էլ չուղենալով յանձնել իրենց զէնքերը, դիմադրել են և իբր թէ սպանել երկու կօզակ: Տակաւին չը կարողացայ ստուգել, թէ որքան ճիշտ է այդ վերջին լուրը:

Ց խ Ո Ւ Ր Փ Ա Ս Տ Ե Ր

Թիֆլիս 2 օգոստոսի

Գաւառներում շարունակուած է բարւած դրուժիւնը թէև ոչ այնքան ծանր չափով: Մասային ընդհարումները չը կան, սակայն օր չէ անցնում որ թալանի ու սապատակութեան զոհ չգնան հայ գիւղերը: Ամենից հայաշատ գաւառներում նոյն իսկ, ուր հայերը ճնշող մեծամասնութիւն են կազմում թւի տեսակէտից՝ թալանները անպակաս են: Ախալքալաքի շրջանն անգամ ազատ չէ մնում մահմէդականների յարձակումներից:

Վերջերս Ալէքսանդրօպօլի գաւառում ապրող ու Ախալքալաքի շրջանին սահմանակից թիւրքերը՝ օգտւելով կողկասում տիրող ընդհանուր իրարանցումից, յարձակւել են մի քանի հայ գիւղերի վրայ թալանի նպատակով:

Ախալքալաքի գաւառում թալանուած են հետևեալ գիւղերը հետևեալ չափերով. — Թ ա կ չ ա յ գիւղից յուլիսի 16-ին տարել են 12 եղ, Յեղդիա գիւղից՝ 80 ձի, որոնցից 20 հատ ամենալաւը ընտրելով՝ միւսները յետ են թողել: Ահօնդուրա՝ 11 գլուխ ապրանք, որոնցից 1-ը գտել են Գ ու լ ա յի գիւղի թիւրքերի նախի մէջ, միւս 10 չկան: Ու Ճ մ ա ն ա յ ի ց տարել են 6 եղ, փոքր խանջիլիցի՝ 5 ձի: Յուլիսի 15-ին Ալէքսանդրօպօլի ճանապարհին մի խումբ թիւրքեր մի քանի անգամ հրացան են արձակում Սաթիսացիների վրայ և տանում 4 եղ, Փ ո կ ա յ ի ց՝ 3 եղ և 5՝ Ծ ա լ կ ա ց ի ն եր ի ց: Ջարգել են երկու մարդու գլուխ: Ս ա թ ի ս ա յ ի ց հովիւն սպանելով տարել են 7 ձի: Ա լ ա կ ե յի ց օրը ցերեկով տարել են 7 գլուխ ապրանք, կարծախից՝ 15, խոսպեայի արօտատեղերից՝ 3, Ալակեպի արօտատեղերից ցերեկով փախցրել են մի կին և երեք օր պահելով՝ բռնաբարած բաց են թողել: Անոջ դրուժիւնը վտանգաւոր է:

Կազմակերպութիւնը այդ առիթով մարդիկ է ուղարկել Ախալքալաքի շրջանը՝ հայերին հովանաւորելու և գողացած ապրանքները յետ խելու համար:

Երևանի շրջանում շուտով կը վերջանան դաշտային որոշ աշխատանքները, որից յետոյ սպասուած են յուզմունքներ. հէնց այժմանից իրարանցման նշաններ կան. բաւական լաւ է կազմակերպուած այդ շրջանի զինւորական գործը...

Ղազախի գաւառապետ Արնոլդի, որի շնորհիւ հայերը բաւական ապահով վիճակի մէջ են ապրում, ապատ մահմէդականների յարձակումներից՝ վերջերս պիտի արտաքսէր իր պաշտօնից մի գ ո ղ ի ծեծած լինելու համար: Այդ առիթով Ղազախի մի խումբ թիւրքեր համախօսուելու էին ներկայացրել փոխարքայի օգնականին, որով խնդրում էին Արնոլդի արտաքսուել: Մի խումբ հայեր, որոնց միացան բարեբախտաբար նոյնքան թիւրքեր, երէկ ներկայացան փոխարքայի օգնականին ու պարզելով Արնոլդի օգտակար ծառայութիւնը՝ խնդրեցին նրան պաշտօնի մէջ թողնել... Հակառակ պարագայում — աւելացրին գաւառի հայ և թիւրք համերաշխ ներկայացուցիչները — դուք, վտանգի կենթարկէք ամբողջ Գազախի բնակչութիւնը ու պատճառ կը դառնաք հայերի և թիւրքերի արհեստհեղ ընդհարումներին վերոյիշեալ գաւառում: Փոխարքայի օգնականը այս անգամ լսեց խաղաղութիւնը գնահատողներին ու համաձայնեց՝ Արնոլդին իր պաշտօնի մէջ թողնել... միայն մի պայմանով՝ որ նա այլևս մարդիկ չը ծեծէ: Արպիտի թունաւոր հեգնութիւն: Ամբողջ երկիրը քանդուած աւրում ու անպատիժ են մնում. մեծագոյն ոճրագործները հպարտօրէն քայլում են զոհերի գիւղերի վրայից, իսկ մի գաւառապետ, փոքր ի շատ արարի արտաքսուած է իր պաշտօնից միայն այն պատճառով որ յանդգնել է ծեծել մի աւագակի մի թիւրք գողի...

Ն.Ա.ԽԻՉԵԻԱՆԻ ԾԲՋԱՆՈՒՄ

Կախիջեան, 23 օգոստոսի

Անցել է աւելի քան երկու ամիս Երևանի նահանգում սեղի ունեցած արիւնտ աղէտներից — տակաւին բոր-

բորւած մտքերը չեն խաղաղւել: Կարծում ենք այն ինչ որ կատարւեց մեր երկրի մէջ, վերջին ամիսների ընթացքում բնաւ չէ կարող երաշխաւորել մեզ, թէ շուտով կը հասնի երկու ընդհարող ժողովուրդների կեանքում մի այնպիսի դրուժիւն, ուր իւրաքանչիւրը միւսի իրաւունքները յանգելով կը շարունակէ աւաջ ընթանալ իր յատուկ հասարակական-կուլտուրական ճանապարհով:

Բաւական է միայն թեթեւ ակնարկ ձգել մեր շուրջը կատարւող անցքերի վրայ, ակննջ դնել տարածւող շշուկներին... Մոլեգնած ամբողջ անձնատուր իր բարբարոսական բնազդներին, նորանոր զոհեր է պահանջում արիւն ու կրակ է տնկում... Հայաբնակ գաւառներից շարունակ մեզ հասնում են յուզիչ անմխիթար տեղեկութիւններ:

Հայ գիւղացին չէ կարող դաշտ դուրս գալ և եթէ զինուած է ինքնապաշտպանութեան համար, ոստիկանը գալիս է ու խլում զէնքը: Թիւրքը ասում է հային. «դու չը պէտք է հունձ անես, այդ դաշտերը մեր սեփականութիւնը պիտի դառնան»։ Չմեռը մօտենում է և հայ գիւղացին պաշար չունի. նա չունի տուն ու ոճախ: Կառավարութիւնը շարունակում է իր կողմնապահ ու զգուշ վերաբերմունքը: Ամեն տեսակ խոչընդոտներ է դնում մասնաւոր անհատների ու խմբերի գործունէութեան դէմ, որոնք գալիս են հայ ժողովրդի ծով ցաւերը ամօքելու... Յիշենք թէ ինչպէս Երևանի նահանգապետ մեծ դժուարութեամբ թոյլատրեց փոխարքայ Նիխիջեանի գաւառը մի քանի վագօն հին իրեղեններ՝ շորեր, լաթեր ու գործիքներ...

Այդ դեռ բաւական չէ. անամթաբար խուզարկում էին արկղերը... Պրինց Նապօլէօնը, Նախիջեանն ու գաւառը շրջիլիս, մեծ մեծ խոտուածներ արաւ հայ գիւղացիներին. խոտուածները այնպէս էլ մնացին:

Կառավարութեան ներկայացուցիչները ոչինչ չեն տնում, իսկ երկու ազգութիւններից կազմած «խաղաղաբար» յանձնաժողովները ուզում են հասնել իրենց նպատակին անպատիւ միջոցներով — մամուլի բերանը փակելով, ճշմարտութեան ձայնը խեղդելով: Այդ յանձնաժողովները թիւրքերի գործն են նպաստաւորում: Պաշտօնապետ ասերես հայտնութիւն քարոզելով, նրանք քնայնում հանգստացնում են զիւրահաւատ հայերին, իսկ թիւրքերը՝ օգտւելով ժամանակաւոր հանգստութիւնից և հասցրի այդ տ ի ս մ ա Ր գ ի լ ւ Ր ա հ ա լ ա տ ու թ թ իւ ն ի ց ի շարունակում է զինել, զէնք ու ռազմամթերք ամբարել ապագայ սխրագործութիւնների համար: Չէնքը մեծ քանակութեամբ ներմուծուած է Թիւրքիայի և Պարսկաստանի սահմաններից: Թ ի լ ը Ք ը ո չ մ ի մ ի ջ ո ց չ է ի ս ն ա յ ու լ մ ի Ր պ ա տ Ր ա ս տ ու թ թ իւ ն ն եր ի հ ա մ ա Ր: Եւ եթէ վերսկսեն հայ-թիւրքական ընդհարումները, ներակայում եմ, թէ ողբան արիւն պիտի հոսի... Վերջին երեք ամառը ընթացքում թիւրքերը լաւ զինւելցին, իսկ հայերը... Գիւմարութեան, ինքնապաշտպանութեան համար նրանք պ ա տ Ր ա ս տ չ է ն ա Ուրիշ հանգամանք. առաջները թիւրքերը յարձակւելիս՝ ընկնում էին թալանի, յարիշտակութեան ետեւից, իսկ այսուհետեւ քանի որ այլևս թալանելու ոչինչ չէ մնում, պիտի միայն կոտորեն ազ. քառացած, թշուառ. հայ ազգաբնակչութիւնը պիտի ձգտեն բնազինջ անել հայ տարրը և այգալիսով իրականացնեն իրենց քաղաքական համիրաւական ծրագրերը: Զարմանալու ոչինչ չի լինի, եթէ շուտով ակնաստես լինենք նորանոր արիւնհեղութիւնների՝ արպէն Գանձակի, Շուշու, Չանգեղուրի և այլ հարեան գաւառներում:

Հարկաւոր է լաւ ճանաչել մեր նենգ, խորդախ թշնամուն, որ զուրկ է ասպետական զգացումներից, հարկաւոր է լաւ ճանաչել նրան, որպէսզի ամեն անգամ անպատիւ կերպով խաբուած չը լինենք նրա տւած խոտուածների կերպով խաբուած չը լինենք նրա տւած խոտուածների կերպով խաբուած չը լինենք նրա բուրժուա երիտասարդութիւնը: Ներկայ լուծութիւնը մի ծանր կոշտար է... Արպէն խուլ կերպով լաւում է նոր արիւնալի մրբիկների որոտը, և հէնց այն անդերից, ուր թիւրքերը միշտ ապահովում էին մեզ, թէ ոչինչ չի լինի...

Ա Ղ Է Տ Ի Վ Ա Յ Ր Ե Ր Ի Յ

Թ ի ժ լ ի ս, 25 յուլիս.

Երևանի ընդհանուր նահանգապետ իշխան Նապօլեոն, այցելելով Նախիջևանի գաւառը, վերադարձաւ Թիֆլիս՝ փոխարքային զեկուցումն տալու: Ընորհիւ այդ զեկուցման, Ալեկանով Թիւրք գեներալը, որ յայտնի ու համարձակ խրատաւոր էր Թիւրքերի սպաստակութիւնները, յետ կանչւեց: Իշխանը իր զեկուցման մէջ 19 կետերից բողոքացած, պնդել է, որ հայերի կրած վնասները անպատճառ պահանջւեն Թիւրքերից, կամ դանձարանը ինքն ստանայ Թիւրքերից: Պէտք է, ասել է, կազմել մի յանձնաժողով՝ հայերի կրած վնասները որոշելու համար:

Բացի դրանից, զեկուցումը յայտարարում է, որ 1) նախարարական են եղել Թիւրքերը և ոչ Թէ հայերը, ինչպէս ամեն կերպ աշխատել է ցոյց տալ Ալեկանով: 2) եղել է և դրսի դրութեան, այսինքն յարձակումները հայերի վրայ եղել են Թիւրքաց կառավարութեան գրգռմամբ և Նախիջևանի խնդրի բաւական ոգևորում են եղել այն մտքով, Թէ կարող են նորից յետ ստանալ իրենց խնդրութիւնը: Թիւրքերի, բնաւորական կառավարութիւնը այժմ համազում է, որ Թիւրքերի շարժումը քաղաքական բնաստիճութիւն ևս ունեցել է, ասելի քան Թէ ծրարել էր բաւարարութիւնը: Ասում են, իշխանի զեկուցումը՝ ստիպել է փոխարքայ Արմենի-Պաշկովին փոխել կարծիքը և խառնովանել վտանգը: Որտեւր նոր են գլխի ընկել որ Նախիջևանի խնդրը և Թիւրք զեկուցումները ծրարել էին ջնջել բոլոր հայերին Նախիջևանի և Էրզրում-Պարսկաստանի գաւառներում, որպէսզի մի ահաբեկ տարածութեան վրայ՝ Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանադրութեամբ՝ սենեան հոս մահաբերական ազդեցականութիւն:

Այդ ծրարիքը, անկասկած, կորստաբեր է և հայերի համար, ուստի այստեղ ամեն կերպ աշխատեց վերադարձնել սուլ փոխտակաւորներին իրենց տեղերը: Անուամենայն այրում են երկարաժամկան քործիքներ, կենդանիներ, նիւթախան օգնութիւն: Նոյնիսկ աշխատում են բաժանել հայերին Թիւրքերից, այնպէս որ այսուհետև հայերը և Թիւրքերը այլևս խառն չ'ապրեն զիւրերում, այլ բոլորովին առանձնացած: Այդ ծրարիքն հաւանութիւն է ասել և իշխան Նապօլեոնը և իր զեկուցման մէջ շեշտել է այդ հանգամանքը: Իշխան Բոնապարտ պահանջում է նոյնպէս, որ կառավարութիւնը օգնէ հայերին՝ վերադառնալ իրենց տեղերը, որպէս զի Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանադրութիւնը վրայ բերուանեայ տարր լինի:

Այդպիսով Երևանի ընդհանուր նահանգապետ Նապօլեոն կողմնակի կերպով իր զեկուցումների մէջ հաստատել է զայդ Թիւրք այն սուլ Թիւրքական ծրարի, որի մասին նորերս յայտարարեց «Իրօշակի» մէջ, որտեղից է այդ լուրը անցաւ Երասխան մամուլի մէջ:

Սակայն, չէ նայելով, որ կառավարութիւնը ենքը յարուցել է վտանգը, դարձեալ վախենում է ազգու միջոցներ ձեռք առնել Թիւրքերի դէմ, երկիւղ կրելով Թէ «հայերը Թիւրքերի ապստամբութեան գեպքում զուցէ չը կամենան կամ անզօր լինեն օգնելու իրեն»:

Նախիջևանի աղէտի վայրերում գործում էին երկու հարկաւորներ՝ Մեդրոս և Կարապետ վարդապետները: Աւերին ներկայացրեց փոխարքային ընդարձակ զեկուցողի, իսկ առաջինը մի փաստական տեղեկագիր պիւրից Նապօլեոնին: Ահա մի քանի քաղաքներ այդ տեղեկագրից:

1) Ն ա խ ի ջ և ա ն քաղաքը—ենթարկեց յարձակումի 12 մայիսի. 195 հայ խնամութեան ընդհանրութեան թաւանակին 180. կորուած են 20 դրամարկներ: Այդ օր սպանւեցին 49 հայեր, որոնց դիակները այրվեցին: Վերաւորում են 12 հոգի: Հայերի կրած վնասն է 1,285,366 ռուբլի: Այդ ահաբեկ կողպուտի մէջ մինչև 10,000 ռուբլի ապրանք:

2) Թ ա ղ ա ք է ն գ—արուարձան քաղաքի, ենթարկեց յարձակումի մայիսի 12-ին. ամբողջովին թաւանակեց 13-ին: Կողպուած է և եկեղեցին, այրւած է մի տուն: Բնակիչ-

ները փախել են քաղաք, զիւղը ամայի է: Թաւանակ է զոյք 33,249 ռուբլու:

3) Հ ա ջ ի վ ա թ զիւղ, ենթարկեց յարձակումի մայիսի 13-ին: Ամբողջովին թաւանակ է կողպուած է եկեղեցին, այրւած են 12 տներ, սպանւած 5 հոգի, վերաւորւած 4, կողպուած է 30,449 ռուբլու զոյք: Մնացած զիւղացիները փախել են. զիւղը՝ ամայի է:

4) Ե ռ ի թ ա թ զիւղ—ենթարկեց յարձակումի 12 մայիսի: Բոլոր տները կողպուած են, ինչպէս և եկեղեցին: Այրւած է մի տուն: Սպանւած՝ 2, վերաւոր 1, զոյք յափշտակւած—40,913 ռ. 77 կ.: Բնակիչները փախել են, զիւղը ամայի է:

5) Գ ի թ ա թ զիւղ ենթարկեց յարձակման 13 մայիսի: Բոլոր տները կողպուած են, ինչպէս և եկեղեցին: Բնակիչները փախել են Շխմահմուդ զիւղը: Գիւղը ամայի է: Սպանւած է 1 հոգի, վերաւորւած 1 հոգի: Կողպուած 9,181 ռուբլու զոյք:

6) Ն ա ղ ա ր ա ք ա զ զիւղ ենթարկեց յարձակման 13-ին: Բոլոր տները կողպուած են, մի քանիսը այրւած. բնակիչները փախել են. ամայի է. կողպուած է եկեղեցին, սպանւած 2 հոգի, վերաւոր 1 հոգի. կողպուած՝ 107,311 ռուբլու զոյք:

Ջ ա հ ա լ մ ժ ժ զիւղ—ենթարկեց յարձակման մայիսի 12-ին: կողպուած է ամբողջովին, նաև եկեղեցին և դրոպրոցը. այրւած են 4 տուն և 8 խնամութ: Բնակիչները ապրում են Շխմահմուդ զիւղում, Ալիբախում և քաղաքում, տները թաւանակ են և ամայի: Սպանւած է 51 հոգի, վերաւորւած 14 հոգի, զոյք կողպուած—393,535 ռուբլու:

Մ ա մ ա ր զ ա - Գ ի ղ ա զիւղ ենթարկեց յարձակման 11-ին: Կողպուած է ամբողջովին, նաև եկեղեցին. բնակիչները ապրում են Շխմահմուդ և Գիւլթափա զիւղերում, սպանւած 3 հոգի, վերաւորւած 1 հոգի. կողպուած 16,412 ռ. զոյք:

9) Խ ա լ լ ա լ զիւղ—ենթարկեց յարձակումի մայիսի 13-ին, կողպուած է ամբողջովին, նաև եկեղեցին: Բնակիչները փախել են, վերաւորւած է 2 հոգի. Յափշտակ. 68,991 ռ. զոյք:

10) Ա լ ա զ ի օ ղ Մ ա ղ ա զիւղ—ենթարկեց յարձակման մայիսի 14-ին, կողպուած ամբողջովին, նաև եկեղեցին. բնակիչները ապրում են Շխմահմուդում: Այրւած է 6 տուն, սպանւած 2 հոգի, վերաւորւած 4 հոգի: Յափշտակւած է 81,442 ռ. զոյք:

11) Ն ռ ի թ զիւղ ենթարկեց յարձակման մայիսի 15-ին: Կողպուած է ամբողջապէս, նաև եկեղեցին և դպրոցը: Այրւած են շատ տներ: Յոյանի չէ սպանւածների և վերաւորների թիւը, ինչպէս և յափշտակւած զոյքի քանակութիւնը:

12) Կ ա թ ա ք ա զիւղ—ենթարկեց յարձակումի մայիսի 13-ին: Կողպուած է ամբողջովին, սպանւած 2 հոգի, յափշտակւած է 43,931 ռ. զոյք:

13) Ա թ ի ն ջ զիւղ, ենթարկեց յարձակումի մայիսի 14-ին. կողպուած է ամբողջովին, նաև եկեղեցին. բնակիչները փախել են. զիւղը ամայի է, սպանւած է 2 հոգի, զոյք յափշտակւած—103,447 ռ.:

14) Գ ի շ ա ձ ա թ զիւղ—ենթարկւած յարձակումի մայիսի 16-ին, կողպուած է ամբողջովին նաև եկեղեցին: Այրւած է մի տուն, բնակիչներ փախել են. սպանւած 2 հոգի: Յափշտակւած զոյք—72,791 ռուբլու:

Տեղեկագրի մէջ այս նոյն կարգով ցուցակապում են 48 զիւղ ենթարկւած յարձակման:

Ահա եզրակացութիւնը: Մայիսի 13-ից Թուրքերը յարձակման ենթարկեցին Կախիջևան քաղաքը և 47 զիւղեր: Որոնցից վերջնականապէս տւերւած են և ամայացած բնակիչներից 19 զիւղ: Կիսա-կործան են, բայց ոչ ամայացած 10 զիւղ: Սակայն իրենց նախիրի մի մասից 18 զիւղ քաղաքում և գաւառում ապանւած են 231 հոգի, վերաւորւած 59 հոգի, անհետացած 9 հոգի: Թաւանակւած զոյքերի ընդհանուր արժէքն է, այսինքն յայտնի եղած՝ մինչև 16 յունիս 1905 թ. ընդամենը 2,609,054 ռուբլի:

Կախիջեան դաւառի բոլոր հայ դիւղերից անվտանգ են մնալ յեւ միայն 5-ը, իսկ թիւրք դիւղերից, որոնց թիւը 3 անգամ աւելի է, քան հայերինը, վնասուել է միայն մի փոքր դիւղ՝ Իթիւան, ուր 10—15 տուն կայ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ՕՐՆՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԻ ԿԱՄԱԿ)

Պետերբուրգ, 1 սեպտեմբեր.

Պատրաստուած էի գրել ձեզ օրւայ բաղաձայն կատակերգութեան մասին, որ «պետական դուժա» է կոչուած, շարագրած կայսերական պալատում, և սարքած՝ ներկայացնելու այն հակայական բեմի վրայ, որի անունն է պարլամենտական Ռուսաստան.

Սակայն վիթխարի որոտը, որ հնչեց Կովկասեան լեռներից—վայր գլորեց իմ գրելը: Ծաղրելու սիրտ չը մնաց, և ոչ էլ ատրոժակ «ծրագրի» մասին խորհելու,—մայրենի երկրում արիւն է հոսում, դիակները թափուած են ինչպէս աշնան տերեւներ, ժողովրդեան աչքերից արիւն է կաթում...

Աւաղ: Յեղափոխութեան արիւնը չէ այդ, որ այնքան ուժով ըմբոստութեան ծիլն է կերակրում, և ինչ էլ մարտական գործը, որ այնքան սրտեր վարեց վերջին տարիները, ցարերի շնչով դեղնացած երկրի բոլոր ծայրերում...

Եղբայրսպան կուր է այդ:

Մի կուր, որի բերած ամօթն և նախատինքը անկարող պետի լինենք լւանալ դարեր շարունակ, կուր, յորինած ցարական գլուխների մէջ և իրագործւած կոյր մոլեռանդութեան բազուկներով:

Որպիսի ծանր ամօթ: Որքա՞ն մեծ դժբախտութիւն: Չարքաշ աշխատաւոր, գողափարով սողորւած հայ ժողովրդի ջանքերը ապարդիւն անցան: Ոչ մի բան չօգնեց.—ճառերն ու թափօրը, խաղաղասիրական կօմիտէներն ու հրապարակային յորդորները՝ ուժ չ'ունեցան զսպելու մարդակերութեան կիրքը, բռնկւած կոյր ամբոխի ծոցում, և բորբոքւած պոլիտիկոսների բերանով: Ամաչելու փոխարէն՝ այդ պոլիտիկոսները խաբել սկսեցին, զգաստանալու տեղ՝ դաւերը կրկնապատկեցին: Եւ ճիշտ այն օրերին, երբ հայերը Շուշի և Բազու, Երևան և Գանձակ ժողովներից դուրս գալով հաշտութեան աւետիք էին տարածում իրենց շուրջը, թիւրքերը՝ ընդհակառակը, զինւելու և յարձակելու նոր ծրագիրն էին յորինում, համոզւած որ հասել է ժամը պանիսլամիզմի թագաւորութեան, այնքա՞ն փափայլած շամիդի պալատում...

Այդ «ծրագիրների» պտուղը դուք տեսաք և տեսնում էք: Ամբողջ դաւառներ սուրի և հուրի մատնւած, արիւն տների մէջ, և հրապարակների վրայ, դիակների կոյտեր, բաղաձայններում, աներ՝ հրդեհի ճարակ, ամբողջ համայնքներ՝ փակուած տիկ, կրօնափոխութեան ենթակայ, իրաւունքը ոտնակոխ, մարդասպանութիւնը՝ թեւատարած:

Եւ այդ հակայական դժբախտութեան ծանր ու մաշող օրերին՝ ողբերգութեան շարագրողները՝ մի բանիսը Պետերբուրգ, միւսները Կ. Պոլիս, և Նրանց «գործակալ-

ները Կովկաս—հանգիստ, խաղաղ, գոհունակութեան ժպիտը երեսին: Կարծէք մեռնողները մարդիկ չեն, այլ ճանձեր, և հոսողը մարդկային արիւն չէ, այլ գետերի ջուր...

Արեան օրերը կ'անցնին:

Կը՝ հասնի նոր օր, պատմական հաշտութեան օրը, երբ համերաշխութեան դաղափարի ներկայացուցիչ ժողովուրդը, որ թիւրքերին համերաշխութեան կոչ էր անում, հպարտութեամբ կը յիշէ անցած վեշտը, երբ ինքը թիւրք ժողովուրդի նորագոյն սերունդը մինչև ականջները կը կարմրի՝ ծնողների կատարած ստորագոյն «քաջագործութեան» համար.—բայց մինչև այդ երջանիկ օրվայ պալուստը կայ մի այլ հաշտութեան թիւն, —պատասխանատուութեան խնդիրը, որ ինչպէս բարոյական մեծագոյն խնդիր, դրւած է մեր առջև, հրամայական և անհերքելի:

Ովքեր են պատասխանատուները—այն եզակի չարագործները, որոնք կազմակերպում են ոճիրը, բայց չեն մասնակցում, որոնք արիւն են տարածում, բայց արիւն չեն տալիս: Բազմաթիւ են նրանք և տեսանելի նոյնիսկ «թագստեան» մէջ: Տարբեր են դիրքով, զգեստով, կրօնով, ձևերով—բայց կապւած եղևունի շղթայով, ներքուստ ծանօթ. միմեանց, յափշտակւած մեծագոյն ոճրի արդիւնքով...

Ո՞վ չէ ճանաչում այն պատասխանատու ոճրագործներին: Կրանց անունները քաջ յայտնի են և՛ ժանդարմական գաղտնի վարչութեանը, և՛ յեղափոխական մարմիններին, և՛ թիւրք ամբոխի ղեկավարներին, ինչպէս և բոլոր նրանց, որոնք աչք ունեն տեսնելու և գլուխ խորհելու...

Ահա մի բանիսը:

Կոմս Ա. Օրօնցով—Վ. աշկով, —Կովկասեան նոր փոխարքայ: Կա եկաւ ձիթնու տերևով բարւեներ և խոստումներ բերեց իր Մեծից, բայց խաղաղութեան և բեփորմների տեղ՝ արիւն տարածեց ամբողջ երկրի մէջ, առատ ինչպէս ռազմի դաշտում: Եւ այս անխիղճ գնեցրալը, որ երբեմն Ալէքսանդր III-ի մտերիմ լինելու գժբախտ համբաւն ունէր, այնքա՞ն անամօթ գտնեց, որ եղեռնի օրերին՝ փոխանակ աղէտի վայրը գնալու, ապաստանեց շանքային ջրերը, Կիսլաուօքսկի բարձունքից՝ իր գործը դիտելու համար...

Գեներալ Շիրեյնկին, առաջինի օգնականը, Պլեյքեան դպրոցի աշակերտ, որ ուղարկեց Պետերբուրգից իբրև պոլիցիական մասի կառավարիչ, և այնտեղից մեր երկիրը բերեց ցաւ, արիւն, սուգ և կոտորած: Կա է, որ լեազօրութիւն, աւելի ճիշտ՝ մասնագիտութիւն ունի՝ լրտեսելու և դաւեր սարքելու: Կա՞ որ այս անօրինակ ոճրի յեռակետն է, թիւրք ոստիկանների հովանաւորը...

Կա պիտատալիստ թագիտի վ—Ելզըզի դիմակաւոր գործակալը, նա որ մարդասպանների ամբողջ վոհմակ է կերակրում, ներշնչող սպանիչների, բաղաձայն գայլ՝ գառան լզեքստով:

Կա խիջեանի խանը, որ թէև սուլթանական ագենտ և կոտորածների ստորագոյն հեղինակ, շարունակում վարել անբախտ աւանի բաղաձայն փաշտօնը, անպատիժ և անհաշիւ:

Գեներալ Ալիխանով, էպօլետակիր պանիսլամիստը, որ «կարգի» փոխարէն ուր գնաց արիւն տա-

բաժնեց և մարդասպանների աջակիցն ու հովանաւորն եղաւ:

Ա հ մ ե դ բ է կ Ա Ղ ա յ ե վ—Բագուի Արուշեւանը միաժամանակ տրւած և սուլթանին և ցարին. մարմնացումը՝ նենգութեան, ներկայացուցիչը պանիսլամիզի և ելլող-գետքի, փետրվարեան կոտորածների նախակարգաւոր, ոճրագործ և լրտես, դաւադիր և մատնիչ:

Թ օ փ չ ի բ ա շ ե վ ղ ի մ ա կ աւ ու ռ ա ծ Ա Ղ ա յ ե վ, համալրամականութեան պօլիտիկոս—երգիչը, դաւադիր՝ խմբագիր անւան տակ, էմիսար՝ պատգամաւորի տիտղոսով:

Վ ի ղ ի ռ օ վ—դաւադիր ժողովների ռգին, անմիտ խուժանի գաղտնի ղեկավար, չարագործ վատթարագոյն տեսակի: Հայտատեաց, մարդատեաց. . .

Մ ա հ մ ե դ բ է կ օ վ—ոստիկանական նշանալիքատուլ թիւրքական էմիսեր, էմիսերի պաշտօնով՝ կորգապահաթեան պաշտօնեայ, մարդասպան և աւաղակ:

Ա հ ա և դ ր անց միւս գործակիցները.

Ու այդ բոլորի համախոհները՝ Երևան, Շուշի, Թիֆլիս, Գանձակ, Գորիս, Օրդուբաթ. . . ոմանք պօլիցիականի ղգեստով, միւսները մօլլայի չալման գլխին, ոմանք բէգերի կամ խաների տիտղոսով վարագուրւած, բարեկամ ոստիկանապետների, մտերիմներ ժանդարմական պաշտօնեաների. . . նրանք, որ Թիւրքիայից ղէնքեր և քարոզիչներ բերեցին, հարեանը հարեանի դէմ ղինեցին անխիղճ գործիք եղան բունապետութեան ձեռքին, և այսբան չարիքի պատճառ դարձան: Միթէ, իրաւի կարծում են, որ նրանց դաւերի հետքերը չեն գտնւած և գաղտնիքը մնացել է անթափանցելի. . . Սխալու՞մ են չարաչար: Միայն ձօրօնցօվ-Գաշկովի է, որ կոյր է ձեւանում, միայն հայկական արեան ծարաւներն են, որ չը տեսնելու են տալիս * . .

Իսկ ոճիրին մասնակից ոստիկանապետներն ու նահանգապետները, ժանդարմական վարչութեան դիմակաւոր պաշտօնեաները, որոնց սիրտը դեռ չէ կշտացել այսբան արիւնից, հեծեծանքի այս անծայր համերգից: Միթէ միամտօրէն շարունակում են կարծել, որ նրանց անունները ոչ որ չը գիտէ, և կամ իսպառ գաղտնիք են նրանց ծրագրներն ու հրամանները, նրանց գրչով ստորագրած արևնոտ կարգադրութիւնները:

Պղտութիւն է այդ:

Այլ ևս ոչինչ չի կայ ծածուկ, ոչինչ գաղտնի: Անմեղ արեան մէջ եռացող ցասումը, այլ ևս չափ ու սահման չունի և հատուցումն է պահանջում, հատուցումն

* Ծ ա ն օ թ. Գաշնակցական Աովկասեան Աօմիտէնիերից մէկը ուղարկել է մեզ մի քանի հեռագիրների պատճէները—ձեռք բերւած գաղտնի ծանուցարարչով—որոնք, իբրև նրմուշ գաղափար են տալիս՝ թէ ինչ պատրաստութիւնների վայ էին թիւրք պրոպագանդիստները: Ահա երկուսը գրանմուկ, թարգմանւած ուսուսերէնից:

Շ ա շ ի յունիսի 13: (Հասցէն). «Գիշերը, հասար: Գանձակ և Թիֆլիս աւ այժմ՝ աջողութիւն չը կայ: Աիմանաւ: Այստեղ տեղական պոլիսանները աննպաստ են: Մանրամասնութիւնը նամակով:

Մ ի ռ ղ ա ռ ա հ ի մ:

Բ ա ղ ա լ, յունիսի 10 (Հասցէն). «Թափշիւրացել գնայ Երևան, Բախշալա՝ թէհրան: Մենք Թիֆլիս ենք: Հեռագիրը Գիւլախմուզովին:—

Ն ա ղ ե բ է կ օ վ

յանուն այն յաւիտենական ոյժի, որ զսպում է ոճիրը, և սանձ դնում ոճրագործների բերանին:

Պատիժ քաղաքական ոճրագործների, ուլքեր են լինեն—ուսու, հայ, թիւրք, պաշտօնեայ թէ հպատակ:

Պատիժ ոճրագործներին. . .

Է. Ա Կ Ն Ո Ի Ն Ի

ժողովրդական Ա.Ո.Ա.Ջ.Ի. ԶԱՂ.Թ.ՈՒԹ.Ի.Ը.Ը.

(Թղթակցութիւն)

Թիւրքիս, 6 օգոստի.

Աովկասեան հայութիւնը ցնծութեան մէջ է. . . կարծես բոլորը մի բոպէ մոռացել են Բագուի, Նախիջևանի աղէտները և այն բոլոր դաժան ու դժբախտ մօծեաները, որոնցով լին է մեր հասարակական-քաղաքական պատմութիւնը:

Այսօրւայ ուկազով ցարը վերագարձնում է հայ ժողովրդին նրանից խլած եկեղեցական գոյքերն ու իրաւաւունք տալիս վերստին բաց անել սպօրինի կերպով փակած հայ եկեղեցական-ծխական դպրոցները: Վերջապէս Ռուսաստանի ներքին քաղաքականութեան ներկայացուցիչները կայսրի բերանով խոստովանում են, որ անհրաժեշտ է փոփոխել այն կանոնադրութիւնները, որոնք վերաբերում են ազգաբնակչութեան հայկական մասին և խանգարում նրա կանոնաւոր խաղաղ զարգացումը: «Մենք շնորհում ենք, ասում է կայսրը, հայ լուսաւորչական հոգեւորականութեան յօգուտ ժողովրդի՝ լայն լուսաւորական գործունէութիւն ունենալու միջոցներ»:

Հայ հասարակութեան այժմեան խնդրութիւնը հետաքրքրական մի երևոյթ է. մեր ժողովուրդը զգում է, որ ինքը մի անմոռանալի յաղթութիւն է տարել նա զգում է, որ վերջին երեք տարիների ընթացքում մի անհաւասար, դրժարին կռիւ է մղել ուսու կառավարութեան դէմ և յետ է ստանում այն բոլորն, ինչ որ իրենից աւաղակաբար յափշտակած են: 1898 թւականի մարտի 26-ի օրէնքը հայ դպրոցների փակման և սրանց գոյքերի գրաւման մասին և 1903 թ. յունիսի 12-ի օրէնքը հայ եկեղեցական կալւածքների գրաւման վերաբերմամբ, եղան այն երկու մեծ հարեւոնները, որոնցով ուսու բիւրօկրատիան կարծում էր միանգամայն ոտնակոխ անել հայ ժողովրդին, սպանել նրա հասարակական-մտաւոր կեանքը: Ասկայն ուսուց ներքին քաղաքականութեան կոյր ու անմիտ վարիչները չարաչար սխալեցին իրենց ակնկալութիւնների մէջ: Հայ ժողովուրդը իր յարատե կռուով ցոյց տուց, որ ինքը մի անխօս ոչխար չէ, ինչպէս երեւակայում էին զանազան Գոլիցիներ ու Ուէլներ: Ռուսահայ ժողովրդի մէջ սկսեց մի նոր արամադրութիւն, որ երբեմնակի այս ու այնտեղ դուրս էր ցայտում հուժկու վրժառութեամբ: Գա յեղափոխական գաղափարի յաղթանակն էր, յեղափոխական մտքի յաղթական մուտքը հայ ժողովրդի աշխարհայեացքի մէջ: Ինչ որ երկար տարիների ընթացքում գուցէ անկարող պիտի լինէին քարոզելու հայ յեղափոխականութեան առաքեալները, ուսու բիւրօկրատիան կարողացաւ 2—3 տարւայ մէջ անել—մղել հայ ժողովրդին դէպի քաղաքական կռիւ, որի պտուղները այսօր սասարէզի վոյս են:

Աւելորդ ենք համարում այստեղ կանգ առնել այդ

կուսի մեծամասնության վրայ, մի առ մի յիշեցնել այն բոլորը, ինչ որ զգացել մտածել է ռուսահայր վերջին տասն ամիսների մէջ, մասնաւոր այս օրերս, երբ Բագրի, Նա- թիվեանի զօհերի արեւը տակաւին չի չորացել... Հայ ժողովուրդը ցոյց տւեց ամբողջ կուլտուրական աշխարհին, որ գիտէ մարտնչել իր հասարակական շահերի պաշտպանութեան համար, գիտէ կուսել, անողոր յար- նասեաններ գործել, գաղափարական դրօշակը բարձր պահելու համար:

Մեկայն ստիպւած ենք մատնանիշ անել որ ժողովուրդական ուրախութիւնը տեղ-տեղ չափ ու սահմանից անցնում է, ընդունելով սգեղ կերպարանք: Այսինքն, մասսային ներքին է, երբ սա գիտակցութեան սահմանն անցնելով, ընկնում է լոկ զգացողական աշխարհը և ինքն- նամուսացութեան մէջ շատ բուռն կերպով արտայայտու- մով իր զգացմունքները. բայց ի՞նչ ասել երիտասարդ- ների, ինտելիգենտների մի խմբի մասին, որ նոյնիսկ մամուլի միջոցով անվիշտ գովասանքներ և շուայրում կու- ռավարութեան ներկայացուցիչներին... Բաղաքական հե- ռասեոսութեան նշան չէ այդքան հրձուներ ցոյց տալը: Մի՞թէ մենք պէտք է գովաբանենք այն թշնամուն, որ դեռ երեկ մեզ ոտնակոխ էր անում, մի՞թէ շնորհակա- լութիւն, երախտիք պիտի արտայայտենք ամեն մի աւա- զակի, ոճրագործի, որ երեկ մեր գոյքը յափշտակեց, կողոպտեց, կոպիտ վիրաւորանք հասցրեց մեզ, իսկ այս- օր այդ բոլորը մեզ, երբ օրինական տիրոջ, կրկին յետ է դարձնում...:

Վերջապէս ի՞նչ երաշխաւորութիւն ունենք, թէ վաղը նոյն կերպով չը պէտք է վարեն, անպատեն մեզ, ինչ- պէս և առաջ: Պետութեան ներքին քաղաքականութիւ- նը՝ դա մի հողմաղաց է, որ ենթակայ է զանազան քա- միների ազդեցութեանը: Մեր դարևոր յարաբերու- թիւնները ռուս կուրավարութեան հետ թող դաս լինի հայ հասկացող մասի համար, որպէսզի զգու- շութեամբ վերաբերենք ցարի կուրավարութեան իւրա- բանչիւր քայլին: Դա մի նենգ, սպանիչ քաղաքականու- թիւն է եղել որին հայերը, տարաբախտաբար, միա- մտօրէն հաւատ են ընծայել, մի քաղաքականութիւն, որը մեզ այնքան բազմաթիւ չարիքներ է հասցրել և հասցնում է: Ի՞նչ կուրավարութիւնը, վերադար- ձնելով հայերիս իրաւունքները, կամենում է մեզ իս- դաղացնել, եթէ նա այդ տեսակ միջոցներով կամենում է հանգստացնել հայ ժողովուրդի գրգռած միտքը՝ ապա մենք էլ չը պիտի մոռանանք, որ դրանով մեր կոխը չի վերջանում, հետևապէս զենքերը վայր դնել ու ժանգի մատնել հարկաւոր չէ. մենք կազմ ու պատրաստ պէտք է լինենք նոր և անակընկալ դէպքերի առջև, որ մեզ համար անսպասելի կերպով կարող է ստեղծել կառա- վարչական նենգ քաղաքականութիւնը...:

Օգոստոսի 7-ին կաթողիկոսի հրամանով կովկասի բոլոր հայ եկեղեցիներում կատարելու են գահացողա- կան մաղթանքներ ցարի համար, օգոստոս 1-ի ուկաղի առիթով: Հազարաւոր հայեր այդ օրը պէտք է խոնկին եկեղեցիներում և ունկնդիր լինեն փառաբա- նական երգեցողութեանը, միմեանց շնորհաւորեն: Այդ տօնական իրարանցման մէջ ժողովուրդը որևէ աղօթք պիտի մըմնջայ յիշատակ այն հերոսների, որոնց արիւ- նով գնեց այսօրայ մեր յաղթութիւնը, մեր իրաւունքը... Չենք կասկածում... Գանձակի, Թիֆլիսի, Բա-

գու և այլ տեղերի հայկական ցոյցերի զօհերը թող գէթ այժմ յիշատակեն, իբրև գաղափարի համար իրենց մատաղ կեանքերը նւիրած զինւորները: Խոնարհ- ւենք հարիւրաւոր շիրիմների առջև, այն թանկագին անունների առջև, որոնք անջնջելի յիշատակ թողեցին հայ յեղափոխական պատմութեան մէջ...:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Կ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Վան, 1 օգոստոսի

Բացի սովմած Հինելու դէպքերից, որ սկսած է յա- ճախակի երևան գալ, սովորական իրադութիւն է՝ քաղ- ցածութիւնից գաղթելը: Գաղթականի առաջ այժմ չի կանգնած արտասահմանը կամ Ռուսաստանը: Ընդհա- կառակը, նա բոլորովին կորցրել է իր տրամադրութիւնը դէպի այդ կորստաբեր ճանապարհները: Այժմ գաղթում են մի նահանգից կամ մի գաւառից միւսը, ազատե- լու վայրագ հարկահաւանքների, սելաֆատերի ձեռքից ու մուրացկանութեամբ իրենց գոյութիւնը քարշ տալու: 25նայած տիրապետող սովին, կառավարութիւնը չի վա- րանում ծանր հարկերի հաւաքման հրամաններ արձա- կել, մի հանգամանք, որ աւելի է արագացնում գաղ- թականութեան գործը:

Կառավարութիւնը ամեն կերպ նպաստում է այդ հոսանքին, նորանոր հարկահաւաքներ ուղարկելով հա- յաբնակ գաւառները: Նրանք ամենայն խստութեամբ ժողովում են տուրքեր, տասնապատիկ կաշառք ու քա- ր ա փ ու լ առնելով:

Կառձկան գաւառում վերջերս 30,000 դահեկա- նի հարկ ասպարէզ եկաւ և սկսած են արգէն ժողովել ամենայն խստութեամբ: Նոյն գաւառի Սորբ գիւղը բոլորովին գաղթեց դէպի Վանի շրջակայք, գիւ- ղացոց արտերը մեծասամբ քիւրգերը տիրապետած են: Կուր անունով հայաբնակ գիւղը ամբողջապէս գաղ- թել է. գիւղում մնացել են քայլելու անընդունակ երեք պառակ կանայք, որոնք բուերի պէս թառում են ան- մարդաբնակ գիւղի տներում: Այդ գիւղում, բացի հինգ տնից, ոչ ոք ցանք չունի և ամբողջ գիւղը վերանորո- գելու հազիւ կարողութիւն ունենայ: Գիւղի կալածք- ների մեծամասնութիւնը գրած է Խորոքսի աղայի կողմից: Ըստուս գիւղի Օսման աղան գրաւել է հայերի արտերի մեծ մասը. այս գիւղը նոյնպէս դատարկւած է: Գիւղացիք գաղթած են Ախլաթի կողմերը: Գաւառը կա- մաց-կամաց դատարկում է հայերից:

Սպարկերտ գաւառի բնակիչները, որոնք մշտապէս ենթակայ են իրենց աղաների բռնաբարութեան, վեր- ջերս սկսել են գաղթել դէպի Մոկս: Օղանդի նատուրը վերջերս գիւղի իշխանների անուններով կնիքներ է շի- նել և գայլ Միւտուրի աշակցութեամբ գրաւել է նոյն գիւղացոց 9 արաբերը: Գիւղացիք դիմում են միւ- տուրին որը ծեծելով, վճարում է նրանց: Կեղծ կնիք- ներ շինող Փիրօն այժմ արտերի տէր դարձած՝ նըս- տել է նոյն գիւղը. իսկ գիւղացիք գաղթեցին դէպի Մոկաց գաւառը: Նոյն գաւառի աղաները գրաւել են հայերի կալածքների մեծ մասը և իրենց տները փո- խադրել հայկական գիւղերը:

Ոչտունիքի մասին խօսելն անգամ մեղք է բռնութեան աշխարհ է. կառավարութեան ձեռքով Հիւսէյն աղան վերսկսեց իր բռնութիւնները: Նրա զըրպարութեան պատճառով, կորուսած Զան-Բեզարի համար ձերբակալեցին նորանոր մարդիկ, որոնք իհարկէ տարիներով կը տառապեն մութ զնդաններուս:

Գառ. Գառ, խեղճ Գառգառ... այնտեղ վճռած են խոտ ուտել և չը հեռանալ իրենց գիւղերից: Մարդիկ ամբողջ օրը նախիրների նման ցրուում են լեռները խոտ հաւաքելու, և իրենց զաւակների համար կանաչ տանելու: Միայն մի քանի տներ են գաղթած և այն էլ աշնանից: Պատրիարքարանը 25 լիրա է յատկացրել. նրանք այդ դրամով վճռեցին սերմ ցանել, իրենք խոտով կ'ապրեն:

Սադի աղան և քանի մի քիւրդեր, հրաւիրեցան Վարա-Սու: Հաջի Ալի-Աղան երազում ֆիդայի է տեսել: Գայլը աղէտներին խորհրդակցութեան է հրաւիրում: Հետեանքը պարզ է... մի մեծ համիսլամական արշաւանք՝ խուզարկութեան պատրուակի տակ:

Թ Ե Ր Թ Օ Ն

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԺԱՆԱՊԱՐԿԻՆ

Հ Ա Ջ Ր Է Ն

ՆՆՆՐ ԱՆԳՐԱՆՆԻԿՆ

Լեռների աղջիկն էր նա, մի ցուրտ ու խաւար գիշիր ժայռոտ ու մռայլ այրերից ծնւած: Կանացի ու գրաւիչ ոչինչ չ'ունէր իր արտաքինի մէջ և միայն զգեստն էր մատնում նրա սեռը: 2մեռը՝ գրտից և ամառը՝ արևից այրւած նրա դէմքը—բրօնզից ձուլւած մի դէմք—թէ և սաստիկ արտայայտիչ էր, բայց անհամարյոք ու խիստ: Սուր քիթը, իրար խառնւած սև յօքերը, գիշատիչ թռչնի անհասնաբար ու կոլոր աչքերը, որոնց վրայ արագ-արագ իջնում էին նօսր թերթերունքները՝ երբ Հազրէն զայրացած էր կամ յուզւած, նրա ուժեղ ու դուրս ցցւած ծնօտը, նոյնպէս շատ հեռու էին կանացիութիւնից և միայն վկայում էին նրա անյողողդդ, անդրդուելի հոգին— ժե՛ն բարբրի հոգին...

Երկար ու ջրուտ սրունքների վրայ ցցւած նրա ոսկըրոտ իրանը ասես երկաթից ձուլւած լինէր միապաղաղ ու հարթ: Նեղ ու տափակ կուրծքը մայրութեան նշոյլ չ'ունէր, երևի այդ էր պատճառը, որ բնութիւնը զգուշացել էր երեխայ կախել նրա չոր ստինքներից, սիրունը հաւատալ նրա կանացիութեանը:

Հազրէն անզաւակ էր, ժայռերի մէջ դուրս ցցւած մենակ, ու անպտուղ ծառն էր նա:

Եւ նրա բայլւածքը... ինչպէս չորացած ծառը տեղահան լինի, թափ առնի ու շարժւի: Երկար ու բարակ բազուկները ձգած յետևը, գլուխը բարձր՝ աչքերը միշտ հեռուն՝ մէկին սպասողի գիրքով, նա յիշեցնում էր Ֆռֆռ-բարի վայրի ոչխար, որ հսկում է արածող հօտի վրայ: Այդ ամբողջ ջրուտ կազմածքը բուրովին զուրկ էր կանացի այն ալիքաձև, օրօրուն շարժումներից, որոնք բնորոշում ու հմայք են տալիս բնուն մայրութեանը:

Ինչո՞վ էր նա գրաւում տղամարդկանց, յայտնի չէ, բայց երեք անգամ ամուսնացել էր և երեք անգամ այրիացել, առանց երբէք «ծնունդ նստելու»: Գիւղում կատակով ասում էին՝ «պէտք է ժամում մոմ կպցնել, որ Հազրէն բնաւ երեխայ չ'ունենայ, թէ չէ, ո՞վ գիտէ նրանից ի՞նչ » ջանավար՝ պիտի ծնւի»:

Եւ Հազրէն չը ծնեց, մայր չ'եղաւ, մնաց սոսկ «Հազրէն բաջի» կամ «Գլխակեր Հազրէ», որովհետև իր ամուսիններից ամեն մէկի հետ հազիւ մի տարի ապրեց: Ասում էին, թէ Հազրէն չորրորդ անգամ սիրով կ'երթար աւետարանի տակ, բայց էլ ցանկացող չը կար, որովհետև նրա ամուսնական անկողնից մինչև գերեզման շատ մօտ էր երևում տղամարդկանց:

«Հազրէն բաջի», թէ «Գլխակեր Հազրէ» ըստ երևոյթին միևնոյն էր նրա համար. կատակներին պատասխանում էր աւելի կծու կատակով ու անցնում: Բայց մինչև վերջը Գոմեր գիւղում ոչ որ չ'իմացաւ, որ այդ խստատեսիլ կնոջ ուժեղ հոգին զուտ կանացի բնքընթիւններ ունի, որ նրա սրտում լուռ լալիս է ամուլ, յուսախաբ մայրութիւնը, երեք անգամ գերեզմանի վրայ ծունկ չորած մայրութիւնը:

— Հողս ձեր գլխին, գեղի զմմէն ճըժերն իմը չե՛ն, ասում էր նա իր ամուսնութիւնը հեգնող կանանց, և նրա խօսքի մէջ լսում էր վերաւոր մայրական սրտի բոլոր թախիծն ու դառնութիւնը: Ասում էր, բայց դէպի փոքրիկ «ճըժերն» անտարբեր էր, սիրում էր միայն ընտիր-ընտիր հերոսներին, մի Սերոբ մի Մուրադ և վերջերում երազում էր Անդրանիկին, որին տակաւին չէր տեսել:

Հազրէն մայր չը դարձաւ, անզաւակ պառակեց, բայց բոլոր մայրերից աւելի հուշակ ունէր ոչ միայն Գոմեր գիւղում այլ և ամբողջ Սասունում: Եւ այն ոչ այն պատճառով, որ Հազրէն երեք մարդ էր առել և առնական ձևեր ունէր, այլ որովհետև Սասունի ռազմիկ, ալիքուփ կեանքի միշտ մասնակցում էր տղամարդի պէս: Եւ այդ կեանքը նրա համար ընդունել էր երեք վերին աստիճանի պարզ և ըմբռնելի օրէնքների կերպարանք. այսպէս, նա գիտէր, որ Սասունը միշտ պէտք է կուրի, երբ թիւրք և քիւրդեր ոտք կոխեն նրա սահմանները, «որովհետև Ծիրանակատարը, Ընկուզնակն ու Ֆռֆռ-բարը շնքի տեղ չեն»։ Երկրորդ՝ կուրելիս պէտք է շտապով լեռը բաշտել և երրորդ՝ միշտ պէտք է յետևել գիւղերը կրակ տալ, որ թշնամին ապաստան ու պաշար չը գտնի:

Եւ Հազրէն կուրների ժամանակ միշտ ինքն էր կրակ տալիս Գոմեր գիւղը, սկսելով իր սեփական խրճիթից: Այս էր պատճառը՝ որ նա փոխանակ ասելու, թէ Սասունի վրայ չորս անգամ արշաւանք է եղել, հպարտութեամբ բացագանչում էր:

— Էս ա ձեռներովս չորս խետ վառեր եմ Գոմերը: Հերոսական ու չարաբաստիկ 95 թւին Ռէս Գրգօի հետ էր նստել վեր կացել, ասում էր ինքը, իսկ Մուշում սասունցի ուրիշ կանանց հետ թիւրք ոստիկանների գլխին առաջին բարը նա էր նետել, այդ փաստ էր:

— Հը, Հազրէ, էտ չորացած ձեռներով մէկ էլ ե՛րբ պէտք է վառես գեղը, հարցնում էին յաճախ կանայք կատակով:

Հազրէն լուրջ կերպարանք էր ընդունում, ձեռքը մեկնում դէպի սարերը:

—Այ, էն սարերի ասլանը երբ ցած գայ և նշան անի, կը վառեմ.

»Սարի ասլանը« Անդրանիկն էր, որ քանի տարիներ ընդ ի վեր Սասնոյ սարերում, Սասնոյ ծուրերի հետ հըս-կուց էր ժայռերի վրայ թառած ժողովրդին:

—Անդրանիկին տեսել ես.

Պատասխանի փոխարէն Հազրէն թափով յետ էր ձգում գլուխը, լեզուն բերնի մէջ չփփացնում ասելու համար, թէ չի տեսել:

—Երբ պէտք լինի Գոմերը վառել, նա կ'երևայ, և երբ երևայ, կը տեսնեմ, իմ տղանի, ջանքի մատաղ, ա-ւելացնում էր նա:

—Սեւ տանի քեզ, գլխակեր Հազրէ, էդ էր պակաս:

—Սեւ դուշմընին տանի, ես ափսոս չեմ. մէկ Սասուն, մէկ Անդրանիկ, մէկ էլ... Հազրէ: Վերջին խօսքի վրայ կանայք հուհուում էին, և Հազրէն հեռանում էր իր հաստատ ուղղաձիգ քայլաձեռով:

Եւ մի օր Սարերի Ասլանը ցած իջաւ իր ծաւրով...

Սասունը վտանգի մէջ էր, Գոմերը պէտք էր թող-նել: Գիւղը դատարկուում էր և քաշուում լեռն ի վեր:

Անտրտունջ ու համր ինչպէս ուխտածներ՝ այդ երկաթէ ժողովուրդը, թողնում էր իր տունն ու տեղը, վերցնում էր իր ունեցածից ինչ կարող էր, և ձմրան վերջի կատարի հողմերի շնչի տակ, ձիւների միջից, սա-ւուց կտրած առապարներն ընդ որո՞ւմից որ կա-րաւանով խաղում էր դէպի լեռնակատարները և լուծ-ւում ժայռերի ու ամպերի հետ: Խմբապետի հետ միա-սին գիւղից վեր գերբ բռնած զինուած տղամարդիկ պաղ ու մառյլ ճակատներով, խոժու յոնքերի տակից նայում էին, թէ ինչպէս իրանց ծեր հայրերը, կանայք ու երեխաները անխուով ու հաստատ քայլերով անց-նում են առաջներէն: Ոչ ոք պէտք չէր համարում քաջալերական մի խօսք ուղղել խուսափող բազմութեա-նը, ոչ ոք խորհուրդ չէր տալիս, թէ ո՞ր գնալ և ի՞նչ պէս, ամեն մէկն իր գործը գիտէր, անթիւ տարիներից ի վեր կուռ մշակած ձեն էր այդ—կին ու երեխաներ ծերերի հետ դէպի անմատչելի կատարները, իսկ կրու-ւող մասը՝ հրացանը ձեռքերին քարերի յետևում պատրաստ թշնամու հանդիպելու: Միայն մի անգամ խմբի կենտրոնում կանգնած գունատ ու խտտաբեր տը-ղամարդը գլուխը բարձրացրեց հրացանի վրայից, և ա-սաց երկու բառ.

—Անցէք շուտով.

Անդրանիկն էր:

—Աստուած քու բազկին յօրութիւն տայ, մումուաց բազմութիւնը և թափ առած շարժեց.

Եւ ոչ մի տրտունջ ծերերի շրթունքներէն, որոնք գուցէ վերջին անգամ էին թողնում հինաւուրց օջառը, որի հետ կապուած էին այնքան յիշողութիւններ, և ոչ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, որոնք այնքան տարիների տնտեսութիւնը ձգում էին թշնամուն և նրա հետ միասին գուցէ և իրանց ամուսինների և եղ-բայրների կեանքը՝ անգամ փոքրիկները, ոչ մի ճիշ չէին արձակում, նրանք միտում էին, կպել էին մայրերի փէշերին և զողզողալով քաշում էին դէպի լեռների ձիւնոտ կատարները եղնիկների ձագերի պէս:

Լուռ էին, և այդ սքանչելի լուռութիւնը ծայրագոյն վտանգի ժամանակ՝ հպարտ ու խորհրդաւոր արհամար-հանքն էր, որ լեռների այս քաջերի զաւակները շար-

տում էին բռնութեան ճակատին: Թափուրն այն աստի-ճան լուրջ էր, և դէմքերն այնքան երկելի զած, որ կար-ծես նրանք ուխտի էին գնում ազատութեան ոգուն, որ թառել էր անմատչելի կատարներին:

Գէպի վեր, դէպի վեր... արծիւները.

Սառած ձիւնը՝ չոր ու անախորժ ճոճոցով փշուում էր նրանց ոտների տակ, տեղ-տեղ սալթաքում էին, կուսում փայտով կամ ուրաքով սառչի մէջ շաւիղ ճեղքում: Քամին աւելի և աւելի խիստ էր փչում, ձիւ-նի չոր հատիկները շփում էր երեսներին, նրանք կա-պտում էին շրթունքները կծոտում չը անբալու հա-մար և դարձեալ բարձրանում:

Գէպի վեր, միշտ դէպի վեր...

Մի անգամ միայն յետ նայեցին, երբ ծխի պտոյտ-ները բարձրացան գիւղի վրայ. բոլոր խրճիթները վառ-ւում էին, դարձեալ ոչ մի տրտունջ, ոչ մի բողբոջ, մի-այն մի մեղմ շշուկ անցաւ շարքերի մէջ.

—Հազրէն է, շշուցին ու լուցին, էլ ոչ մի աւե-լորդ խօսք չ'եկաւ խղճու, արատաւորելու այն քար լուռութիւնը, որ նրանց ազատ կամքի ու սրտի գոռոզ արտայայտութիւնն էր:

Եւ հեռուն գիւղը շարունակում էր վառելի ծխու-տալով, և բոցերը լափում էին այնքան աշխատանք, այնքան տարիների արիւն-քրտինքի արգիւնքը: Մերթ ընդ մերթ, քամու ուժգին հոսանքը ցրում էր ծուխը, այն ժամանակ երևում էր գիւղում մի կանացի կեր-պարանք, սև ու կատարի, ինչպէս չար ոգի որ բոցա-վառած մի լաթով վազում էր մի տնից միւսը, մի փո-ղոցից միւսը և ուր նա յայտնուում էր, հրդեհը նրա յետևից վազում էր, ինչպէս հրդեհն վիշապ: Զար-հուրելի էր Հազրէն, տասն անգամ նա կտրու բոցերի մէջ, կարծես հրդեհը լափեց նրա շրթացած մարմինը, և տասն անգամ էլի յայտնեց, միշտ վազելով, միշտ կրակ տալով այս ու այն տունը:

Գիւղից վեր՝ աւերակ գոմերի պատերի յետևում շարած, զինուած խումբը նոյնպէս լուռ էր: Հրացան-ները պինդ սղմած ձեռքերի մէջ՝ այդ մառյլ խումբը սպասում էր գլխաւորի հրամանին, որ գլխաւորը յետ ձգած՝ ճակատը սառն հովի գէմ, մերթ սուր աչքերով մերթ գիտակով պրպտում էր հեռուն:

—Պառաւին կը զարնեն, մումուաց նա կամացով խումբը նայում էր և լուռ էր:

Արդարև, գիւղից աւելի հեռու, հարթավայրերի վրա-յից դէպի վեր էր խաղում մի սև, ահագին գանգաւ, որ հեղեղի պէս լայնանում էր, փուռում, գալարում և նե-ղանում, միշտ առաջանալով սպառնալի կերպով: Թիւր-քական բանակն էր այն և բիւրդական բազմաթիւ հը-րոսակներ, հազարների արիւնարբու մի խումբան, որ առաջանում էր դէպի Գոմեր, դէպի Սասուն, աւերածն ու արիւնը ոտներին կապած: Եւ ոչ մի ցնցում գիւղի վե-րևում թառած կտրիճների շարքի մէջ, միայն յոնքերին աւելի խոժուեցին ու վար իջան, և աչքերի բիւրբը նեղացան աւելի լաւ որոշելու համար թշնամու շար-ժումները:

—Ձէն տուր, տղա, հրամայեց գլխաւորը կողքին կանգնած ընկերոջը, պառաւին կը զարնեն մեղք է թող փախչի, բաւական է:

Եւ մի հայդուկ ահագնագլորդ կանչեց.

—Հազրէ, Հազրէ է... Եւ ձորերը թնդացին է...է...է...

—Հէյ Տօ, եղաւ պատասխանը և գիւղի ծխերի ու բոցերի միջոց դուրս թռաւ նա, այն զարհուրելի պառաւը, սև, խանձաճ, ու այլանդակ, դուրս թռաւ ու սկսեց վազել լեռնի վեր, դէպի խումբը:

Նա արդէն մօտ էր. ահա կանգ առաւ, երևի, մի վայրկեան շունչ առնելու համար, յետ դարձաւ, հպարտութեամբ ու հրճանքով նայում էր իր աւերիչ գործի բոսորային գեղեցկութեանը, ապա փոխանակ շարունակելու վերելքը, նա յանկարծ գլխին տւեց երկու ձեռքով և կրկին վազեց դէպի վար, դէպի հրդեհուող գիւղը:

—Հազրէ, Հազրէէ՛... կանչեց նոյն ձայնը:

—Իրիցու տուն մնաց, եղաւ պառաւի պատասխանը. քիչ յետոյ նա կրկին կորաւ բոցերի ու ծխի մէջ և ապա գիւղի եզրին մենակ ցցաճ սպիտակ տունը բռնկւեց: Տերտէրի տունն էր այն:

Խմբակները գլուխն օրօրեց և նրա խիստ դէմքի վրայ մի ժպիտ խաղաց. այդպէս են փայլում՝ ձմերային արևի գունատ շողերը սառած ձեան վրայ:

—Պառաւին անպատճառ կը զարնեն, մոռաց նա դժկամակութեամբ և վերստին դիտակն աչքերին դրեց: Թշնամին մօտ էր. նրա ծայրը հասաւ ու մխեց գիւղի մէջ ու կանգ առաւ. իսկոյն յետոյ հրացանների միահամուռ որոտը խառնեց բոցերի մոնչիւնին:

Վերևեց չպատասխանեցին, ծուխը փակել էր նրանց հայեացքի առաջը. պարանոցներն առաջ ձգած և հրացանների փողերը դէպի թշնամին, նրանք լուռ նայում էին կնճռոտ ճակատների տակից:

Հազրէն մոռացւեց, նա կորաւ բոցերի ու դնդակների տակ:

Թշնամին մի փոքր վարանումից յետոյ շրջան գործեց և նրա մի թևը յայտնեց գիւղի աջ կողմից.

«Վրակ» որոտաց գլխաւորի խիստ ու խրոխտ ձայնը: Հայդուկների հրացանները միաժամանակ չխկչխկացին, միահամուռ որոտը դրնդաց լեռներում, թշնամու ճակատն իրար անցաւ և ընկրկեց դէպի յետ:

«Վրակ անընդհատ» վերստին լսեց հրամանը. էլ դադար չկար. կատաղի կռիւ էր:

Գիւղի ծխերի ու բոցերի շուրջը գնդակները սուլում էին, հազարաւոր բանակը ատամները կրճտելով գլուխ էր հանում՝ մերթ ձախ, մերթ աջ ինչպէս շշկած վիշապ և ամեն անգամ վերի փոքրաթիւ խմբի գնդակների տակ յետ քաշուով:

—Հէյ Տօ, զարկէք ձեզ մատաղ, սուրբ Ասպէրիկը ձեզ քեռմաք, ջան, ջան:

Հազրէն էր... կուռղների թիկունքում:

Նրբ հկաւ, ինչպէս ապաուեց այս անօրինակ պառաւը, ոչ ոք չը գիտէր, և մտածելու ժամանակ էլ չունէր:

—Վրակ, որոտում էր խմբակները և լեռները դրնդում էին ոլոր մոլոր արձագանքներով:

—Ջան, ջան Անդրանիկ, կրկնում էր պառաւը զարկերի հետ, վազվզում էր դիրքերի վրայ, նայում էր ամեն մէկին առանձին առանձին, հոգին այրում էր ճանաչելու համար, թէ ո՞րն է Սարերի Ասլանը, «իր տըղան», բայց գտնել չէր կարողանում և կուռղ կտրիճներից հարցնելու էլ սիրտ չէր անում: Նա լուռ լսում էր խմբի միջոց բարձրացող այն հպարտ ձայնը, որ «կրակ» էր հրամայում, բայց չէր կարողանում իմանալ, ո՞րն է

խմբակները, բոլորը հայդուկներ էին, բոլորը կուռու էին հաւասար կատաղութեամբ:

—Վճյ քոննայ Հազրէն, բացգանչեց նա յանկարծ, դօշդ բաց է, դօշիդ մատաղ. և նա մի ահագին բար գրկեց ու տնքալով տարաւ տեղաւորելու կուռղներից մէկի առաջը, ուր պատը ցածր էր: Կուռու բայց յանկարծ բարը ցած թողեց, յետ-յետ գնաց, ընկաւ թիկունքին իր երկար հասակով, ձեռքերը տարածեց ու մնաց անշարժ:

—Հազրէ... Գնդակը թափ էր անցել կրծքից.

Նրա աչքերը շարեցին, և վտիտ մարմինը ձգձգեց ու աւելի երկարացաւ նա, որի կուրծքն էր ուզում պատսպարել Հազրէն, կուռու, բնքշուութեամբ բռնեց պառաւի գրուխը և իր ծնկանը դրեց.

—Հազրէ...

«Ջուր...» նրան ջուր տւին: Պառաւն աչքերը կիսարաց, ձեռները տարածեց և մէկին փնտրում էր:

—Ի՞նչ կ'ուզես Հազրէ:

—Սարերի... Ասլանին... Անդրա... լաօ... և

Նա չէր իմանում, որ իր գրուխը գրկողը հէնց Սարերի Ասլանն է, և ինքն առանց ճանաչելու, նրա կրծքի առաջ էր բար դնում, նրան էր զոհ գնացել. «Ի՞նչ եմ» հազիւ մրմնջաց յուզած տղամարդը. հերոսի աչքերը թացացան, նա աւելի կուռու պառաւի վրայ, և որդու պէս համբուրեց նրա սառն ճակատը:

Հազրէի բազուկները յետին թափով փարեցին նրա պարանոցով ու նա հազիւ մրմնջաց.

—Ես էլ... մատաղ... Անդրան... Սարերի Ասլան— լաօ... իմ լաօ...

Եւ երջանիկ ժպիտը սառեց նրա գունատ շրթունքներին:

Հազրէն մեռաւ՝ գիւղը դեռ վառում էր. թշնամին այդ օրը յետ մղեց ահագին կորուստներով, իսկ համբը կարաւանը ձիւների ու սառուցների միջոց շարունակում էր բաշկել դէպի վեր, դէպի վեր... արծիւները...

Ղ Ա Ր Ի Բ

Ք Ա Ս Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն Դ Ա Ծ Ի Ն Ք Ը

Արեան գետերը դադար առան Մանչուրիայի դաշտերում. խաղաղութիւնը կնքեց: Ուռուկները նախաձեռնութիւնը, չը նայած յոռետես մարգարէութիւններին, պսակեց կատարեալ աղողութեամբ և ամերիկական Պորտսմութ քաղաքում՝ գումարած ոռոս ու եպոնական լիագործների ժողովը երեք շաբաթայ տեղային սակարգութիւններից յետոյ՝ ծանուցեց աշխարհին իր հաշտարար եզրակացութիւնը:

Տասնևութ ամսայ արհաւիրալի պատերազմի ընթացքում՝ ցարիզմը վերջապէս մի յաղթութիւն տարաւ, Ախտտէի ձեռքով. նա չը տւեց Եպոնիայի պահանջած պատերազմական տուգանքը, չը տւեց ամողջապէս Սախալին կղզին, որի կէսը միայն անցաւ Եպոնիային. նա չը զիջեց և մի քանի այլ երկրորդական կէտերում: Այդքանն էլ բաւական էր, որ ողորմելի բիւրօկրատեան աքլորանար, որ շօվինիստ մամուլը փէր յաղթութեան

փողը, խօսել ինչ որ «նուսական ուղիմատուճների» մասին, կարծես թէ ցարիզով չէր, որ արժանացել էր ամբողջ աշխարհի ծաղր ու ծանակին, որ խորտակել էր Եսայիի վրայ, Պորտ-Արտուրում, Լիաօ-Եանգում, Պուկդէնում...

Այսպէս են աշխարհիս բաները. Ռուսաստանը դարձեալ գոհ է, նա գոհանում է և պատրանքներով բայց տիեզերական պատուութիւնը լուռ ու մունջ իր գործն է տեսնում: Նա արդէն մեծ պետութեան աստիճանը բարձրացրեց Եսայիիային և հռչակեց Ռուսաստանի զինւորական անակութիւնը:

Շվեդներ, լեհեր, տաճիկներ, պարսիկներ դէմ՝ ցարիզը միշտ յաղթական էր, գոռոզ ու ամբարտաւան, բայց ահա մի կազմակերպած, թէև փոքրիկ, ասիական պետութեան ահարկու հարւածների տակ նա ճարձատում է, յետ է նահանջում, միշտ անպատիւ պարտութիւններով և իվերջոյ ստորագրում է մի անպատիւ խաղաղութիւն...

Խաղաղութեան այդ դաշինքը, ուր յաղթողը ցոյց տւեց անսպասելի չափաւորութիւն—նոյն իսկ իր սեփական երկիրը ալեկոծելու ընկով—տալիս է Եսայիիային անհուն արտօնութիւններ: Առանց նւաճողական, աւարատեւջ ձգտումների՝ Եսայիան շեշտեց միայն իր էական պահանջները վրայ, յանուն որոնց նա պատերազմ էր յայտարարել: Նրա էական նպատակն էր՝ հաստատել իր հովանաւորութիւնը Վորէայի թագաւորութեան վրայ և դուրս քշել ռուսներին Փանջուրիայից, ուսկից ցարիզմի աշխարհակալող ախորժակները սպառնում էին նրա կենսական շահերին: Ծրագիրը կատարելապէս իրագործւած է: Ռուսական նւատորմը նա ոչնչացրեց, մահացու հարւած տւեց Ռուսաստանի գերիշխանութեանը Ծայրագոյն Արևելքում—ահա ճշմարիտ յաղթանակը: Այդ գերիշխանութիւնը այժմ անցաւ Եսայիիային:

Մի նոր մեծ պետութիւն ծնունդ առաւ Ասիայում. և մի հին մեծ պետութիւն խորտակեց Եւրոպայում,— ահա, կարճ խօսքով, այդ արեւնոտ պատերազմի եղբակացութիւնը: Հիւսիսային հսկայի «անպարտելիութեան» առասպելը օդը ցնդեց, բռնապետական շէնքը երերեց իւր հիմքերից, ու հասաւ հոգեւորքի,—այս եղաւ հետեւանքը Ալէքսէնդրի ու Պէվէնի յարուցած խայտառակութեան:

Համաշխարհային քաղաքականութեան մէջ այդպիսով տեղի ունեցաւ մի խորունկ փոփոխութիւն, որը յղի է մեծամեծ անակնկալներով: Մարգարէութիւնները բազմանում են հրապարակի վրայ: Գուշակում են, որ եթէ Եսայիան, մեծ Բրիտանիայի դաշնակիցը, յանձնառու լինի պաշտպանելու Հնդկաստանը,—Անգլիան, ազատւած այդ մեծ գաղութը ապահովելու մշտական հոգսից, այլ ևս կը դադարէ՝ Ռուսաստանին իբրև թշնամի նկատել Արևելքում և թոյլ կը տայ նրան իրագործել իր վաղեմի տենչը — գրաւել Վ. Պուլիսը: Անգլիան այդպիսով կը յաջողէ դուրս մղել փոքր Ասիայի սահմաններից իր ամենահաւոր հակառակորդին՝ Գերմանիային...

*

Պատերազմը հրատարակելիս՝ բռնապետութիւնը նւատակ ունէր՝ զինւորական փայլուն յաղթութիւններով շեղել ժողովրդի ուշադրութիւնը ներսում հասունացած խնդիրներից, բայց առաջ եկաւ նրա ցանկութեան ուղղակի հակառակը: Ներքին վերանորոգման խնդիրը միշտ

աւելի և աւելի բորբոքում է. նա արդէն ընդունել է մի այնպիսի ուղղութիւն, որը քայլ առ քայլ ճակատագրական անհրաժեշտութեամբ պիտի հասցնէ իր նպատակակէտին,— ժողովրդական գերիշխանութեան:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄՍ.

Առաջիկայ նոր տարուն պիտի բացւի պետական Գ ու լ մ ա ն: Այդ է ցարիզմի մինչև օրս արած մեծագոյն շիջումը:

Բռնապետութեան «սահմանադրութիւնն» է դա, Պորէգոնօսցէվների ու Տրէպօվների «պարլամենտ», հայերէն լեզուով՝ խօսարանը, ուր սակայն մարդիկ պիտի ճաւաքեն ոչ թէ խօսելու, այլ լռելու համար...

Աշխարհը ըստ արժանոյն գնահատեց այդ սահմանադրական կատակերգութիւնը, որը նպատակ ունէր թող փչել, սիրաշահել ազատամիտներին ու արմատականներին և կասեցնել յեղափոխական ճարակող հոսանքը:

Ամենաչափաւոր ազատամիտներն անգամ յուսախափ եղան: Պետական դուժան լուր խորհրդակցական մի հիմնարկութիւն է Պետական խորհրդի կողքին: Նա «պահպանում է միահեծան իշխանութեան հիմնական օրէնքները»: Նա սահմանում է վարկային (ցէնզական) ընտրողական իրաւունք: Նա տալիս է ընտրելու իրաւունք մի շնչին և այն էլ պահպանողական, յետագէմ փոքրամասնութեան: Այդ իրաւունքից զուրկ է մնում աշխատաւոր ընդհանրութիւնը, որի երկարատեւ ձիգերի արդիւնքն են արքայական զինուորները: Այնտեղ, դուժարի գրեթէ զոնիակ նիստերի մէջ պատգամաւորները կարող են ամեն բան վիճաբանութեան ու քննութեան ենթարկել, բացի այն հարցերից, որոնք խախտում են միապետութեան հիմքը: Այնտեղ կարող են նոյնիսկ միաձայն որոշումներ ընդունել, սակայն որոշումներ, որոնք պիտի մնան որպէս մեռած տառ,—պետական խորհուրդը և Նիկօլա II-ը կարող են միշտ իրենց veto-ն դնել:

Պատգամաւորները կարող են անել այլ և այլ հարցապնդումներ, կարող են քննել բիւջէն և ուրիշ բազմաթիւ հարցեր, կարող են ռէֆորմների պահանջներ դնել,—բայց միևնույնը ազատ պիտի լինին պատասխանելու պարտաւորութիւնից, նրանք պիտի լռեն, իբրև անպատասխանատու և ազատ իրենց կամայականութեան մէջ... Ահա այսպիսի մօզերն բռնապետական սահմանադրութեամբ է, որ կոյր, լրբացած կամարիլլան խիզախում է դիմաւորել Յեղափոխութեանը...

Ռուս յեղափոխական շարժումը պիտի կարողանայ արդեօք արժանաւոր կերպով վեր բարձրացնել նետուած ձեռնոցը,—թէ՛ պիտի շարունակէ դեպքերը յուսահատեցուցիչ մրափի մէջ, ջլատուած կուսակցական ամուլ ու անպատիւ պայքարներով...

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

Խաղաղութեան Միջազգային XIV կոնգրէսը այս տարի դեմոստրեց Լիւցերն քաղաքում: Կախարդ տարւայ նման, այս անգամ էլ հայկական դատար պաշտպանելու պաշտօնը ստանձնել էր մեր բարեկամ՝ Պիլիպպոսը: Կոնգրէսը միաձայն

ու բուռն ծախսհարույթի ընդունելու հետևեալ ուրախութիւնը:

Ստորագրութեան կոնգրէսը կրկնելով նախորդ համագործակցութեան մէջ արագաճած գաւազնաբերութիւնը՝ սխալողաբար խնդրում է Բերլինի պահապանը ստորագրող պետութիւններին՝ վերջապէս իրագործել այլ Հայաստանում եւ Մակեդոնիայում 23 եւ 61-րդ յօդուածներով խոստացած եւ Մայիսեան ծագողով հետագայում բեժմաները:

Կոնգրէսը յայտնում է իր ջերմ համակրանքը Կովկասեան կոստրովների գոններին, պահապանելով ռուս կառավարութեան անուարարութիւնը:

Կովկասեան արիւննոտ անցքերի տոժիւ մեր խմբագրութիւնը ուղղակի քաղաքակիրթ ժողովուրդի շնորհիւ մի շքանշանակալի, Ֆրասերէն շեքուրով, որ ամբողջով լեհամբար արտաք կը բերենք յայտնող համարում:

Մեզ ազդարկած է ռուսական մի շքանշանակալ, որից առաջ նման անգնեալ չուրածք:

Ի ն կ ե ռ ե ռ:

Եւրոպիայի և խոսել այն ցնցման մասին, որ առաջացրին Հայութեան մէջ վերջերս Կովկասում տեղի ունեցած դէպքերը: Առաջ եկաւ հայ ժողովուրդը կորստեան վրէժախնայից արտաքուր զարկը, և ժողովուրդի բոլոր խաւերը՝ ըստ հարաւորութեան եկան նպաստելու ինքնապաշտպանութեան գործին: Հայի առաջ ամեն բողոք գրեւծ է նրա լինել չը լինելու հարցը: Միակ միջոցը, որ այժմ կարող է հանել մեր ժողովուրդը իր ծանր գրութիւնից — զ ի ն է լ ն է: Սակայն մի ամբողջ ժողովուրդ զինեւելու համար ահագին նիւթակալ միջոցներ են հարկաւոր: Եւրոպայի հայ ուսանողութիւնը, իբրև մի ամբողջութիւն, զրկեւծ է ժողովուրդին սկսելու կերպով օգնելու հարաւորութիւնից: Սակայն ուսանողութիւնը կարող է ստանալիւ նրան զէնք ձեռք բերելու գործում: Աւստի մենք՝ մի խումբ հայ ուսանողներս, բանալով մեր մէջ առանց կուսակցութեան՝ խորութեան հանգամանակութեան զինում ենք ձեռք ընկերներ, առաջարկելով նոյնը անել ձեր քաղաքի հայ ուսանողական շրջանում: Բոլոր տեղերից ստացուող յետոյ գումարը կուղարկուի ժընեպ Գաղանկութեան Եւրեմեան Բերլինի, այդ կազմակերպութիւնը սպասուցած լինելով, որ ինքը ամենաձեռնարկ համար է Կովկասեան հայերին զինելու և ինքնապաշտպանութեան գործը վարելու մէջ: Գողը, որի մասին հաշիւ կը տրուի «Գրոշակում», պետի կազմի ուսանողական սպանական ֆոնդ», բացառապէս կը յատկացուի Կովկասում հայ ժողովուրդի զինելուն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ա Չ Դ Ե Ր

Ծ Ր Զ Ա Ր Ե Ր Ա Կ Ա Ն

Հ. Յ. Գ. Արեւելեան Բիւրօն եւ Մ. Գ. Ի. Կեմ. Կովկասի իրենց վերջին միացեալ նիստում խորհրդածութեան նիւթ զարմին Չեմսլոյի ինկիւր եւ երկու ուսումնասիրութիւնից յետոյ եկան նետեալ եզրակացութեան.

Նախ՝ Գաղանկութիւնը ունենալով իր բողոքական աւելի արմատական պահանջներն ու հասարակական աւելի բարձր իդէալները՝ ոչ մի կերպ չէ կարող ողջունել կառավարութեան կողմից կովկասեան ժողովուրդին տրուած այդ փոքրիկ անհեմարելի շնորհք: Մեր կազմակերպութիւնը իր ծրագրի մէջ արտապայտել է այն, ինչ նա է ուզում ստանալ գեների ուժով, բունակալ ռուս կառավարութիւնից: Նրա ուզածը գեներալի պէս խղճուկ հիմնարկութիւնը չէ, մի հիմնարկութիւն, որ լաւագոյն ձեւն անգամ ամբողջովին ենթարկուում է նախագապի խիստանութեան: Նա, իբրեւ հայ ժողովուրդի մեծագոյն մասի բողոքական բողոք իդէալները կերպարացուցիչը, չէ կարող որեւէ մասնակցութիւն ունենալ գեներալի չեզն ու խարուսիկ վերանորոգութիւնների հարցում:

Սակայն, որովհետեւ հայ հասարակութիւնը, կամայ թէ անկամայ,

պիտի մասնակցէ գաւազնեւում կայանալի խորհրդակցութիւններին, ուստի կր կամեալիքն որոշ գոյցումներ հայ նրան՝ գեներալի հիմնարկութիւնը հնարաւոր եղածին չափ մօտեցնելու ժողովրդական պահանջներին: Ամենից առաջ պէ՛տ է աւելանալ ամբողջ ժողովուրդին — ունենալ որ մասնակցի անել գեներալի գործին: Ամեն մի անհաս, անկախ իր պարտավորմանից, իր պայմանականութիւնից՝ ընդունում է իր վրայ երկրի ընդհանուր ճիշտագան եւ Կաղանկան կեանքի այս կամ այն մասը:

Հասարակական ամեն մի երեւոյթ իր արագաճմանը ունի նախարկութեան բոլոր խաւերում ու բոլոր վայրերում եւ որովհետեւ չը կայ միը, որ ուղղակի, թէ անուղղակի կերպով շահագրգռած չը լինի հասարակական ամեն կարգի խնդիրներում (ներկայ դեպքում՝ գեներալի), ուրեմն եւ չը պէ՛տ է գեներալի մէկը, որ գուրկ լինի ներկայացուցիչ ընտրելու եւ ընտրելու իրաւունքից: Արդարութեան սեպակը — որին պէ՛տ է Լեքարկի ամեն մի օրէնք — հարկաւորում է մեզ ընդունել եւ առաջարկել ընդհանուր ձայնասուրբեան սկզբունքը: Ուրի խոսով՝ վերացնել ամեն սեպակ ց է ն գ ի գործարարութիւն: Եւ որպէսզի այլ ընդհանուր ձայնասուրբեան մէջ մեծամասնութիւնը անկարող լինի նեղ փոքրամասնութեան՝ պիտի մտնէ մտնի համայնական միութիւնների սկզբունքը, այսինքն պիտի աւելանալ, որքան կարելի է հասարակութիւնը փոքր մասերի բաժանել՝ խաւանջարից հալով իր ուզած կանոնադրութիւնն ու կառավարելու իրաւունքը:

Ռուսաստանում մինչեւ այժմ գոյութիւն ունեցող գեներալի հիմնարկութիւնները գեներալի ուսիկանական իշխանութեան ներքոյ եւ ամեն կերպ կախումն ունենալով կառավարութիւնից՝ չէին կարողանում մարտնչել անգամ առաջ սանել ժողովրդական սպանողութեան գործը: Ռուսի ամեն կերպ պէ՛տ է աւելանալ, որ գեներալներ որեւէ կախումն չունենան ու ընդհանուր մարտնչելուց: Վերջիններս միջանկյալ զեներալի խնդիրների մէջ, իբրեւ միանգամայն վնասակար միջանկյալ անպայման կերպով պէ՛տ է միտնել ու գրա փոխարէն պիտի պահանջել գեներալի հիմնարկութիւնների համար սեղական օրէնքական իրաւունք:

Եւրոպայի գեներալի համայն պէ՛տ է իրաւունք ունենալ իր շեղի համար օրէնքներ մտնել եւ գործարքը: Այս բոլորին պիտի կցել նաեւ այնպիսի պահանջներ, որոնք թեւ գուց գեներալին չեն, բայց որոնց ներկայութիւնը անհրաժեշտ է գեներալի գործունէութիւնը ապահովելու հարմարութեամբ: Պիտի անպայման կերպով առաջ սանել խօսի, մեքի եւ ամեն սեպակ ժողովների ազատութեան պահանջները, որպէսզի ամեն մի անհաս կարողանայ ազատել իր կարմիր յայտնել գեներալի ենթարկւած բոլոր խնդիրների մասին:

Առանց այս համայնականների՝ գեներալի կրկին մի մեծամ հիմնարկութիւն, մի ամբողջ ժողովուրդ յոգեւած քիկումնին, մի աւելորդ մեծանորութիւն նրա հազարաւոր մեծանորութիւնների շարքում...

Սակայն ինչպիսի պահանջներ պահանջում ենք. 1) ընդհանուր եւ հաւասար ձայնասուրբութիւն. 2) ամեն սեպակ ցեղի վերացում. 3) մանր հողային միութիւններ. 4) գեներալի հիմնարկութիւնների կասարեալ սկզբունքներ. 5) օրէնքական իրաւունք. 6) խօսի եւ ժողովների ազատութիւն:

Հ. Յ. Գ. ԱՐԵՎԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Ներկայ հոկտեմբեր ամսից սկսած «Գրոշակը» պետք է հրատարակուի ամիսը երկու անգամ, իբրաքանցիկը ամսի 15-ին եւ 30-ին, պանպակետով նախկին ծառայը եւ դիրքը:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՎԵՍՏԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝ Շ Վ Է Յ ց ար Ի ա. Ներքին անցորդից Ֆր. 20, Մարտից 25: Գ Ե Ր Բ Ա Ն Ի ա. — Վերջին անգամը ուսանողութիւնը՝ ձեռնարկ. Ա. Ս. 20 Տր.:

Ռ ու ա ս տ ա ն . — Դ Ր Ա Մ Կ օ ճ ի տ է ն Երկու անգամէն Ֆր. 12,000: Վզեցեստանցի Ա. Ա.-ից (50 բուրձի) 132, 50
Պարսկաստան—Գետափից վաճառուու միջոցով 127,65 Ֆր. նւի-
րատուններն են „Յոյս“ խմբից անդամավճար, ծնուագործ եւայլն
220 ղուան, Փնշիկ 50, Բ. Պետրոս 10, Թուրքի 10, Վարդան 10,
Գումար 300: Նոյնի միջոցով, նուէր երկսեռ սաներից 90 Ֆր. Նոյն
տեղից.—Յ-ի միջոցով սրակաղարամ Յ.-ից 50 ղու. Նէրգիւրի Տ. Գ.
Զահ.-ից 50 ղու. մի քանի համակրողներին 80 ղու.:
Ընդհանուր գումար Ֆր. 12491, 50

ԱՅԳԵՏԱՆԻ Կօճիտէն՝

Յունւար, Փետրւար, եւ մարտ ամիսների 1905 թ.
Հարիւր խ. ամսավճար 25 ռ. 72 կ. Յոյս խ. 28. 50, Դարձմանիւր
Ա. խ. 10. Դարձմանիւր Բ. խ. 4. 20, Ոսկեհանք Ա. խ. 4. 50, Ոսկեհանք
Բ. խ. 3. 50, Փառանծեմ Ա. խ. 2. 80, Մարջիւն Ա. խ. 30, Լուսննթագ
գիւղի Վրէժ ա. ք. գ. ղ. խ. 18, Պանդուխտ խ-ի միջ. երեկոյթից 50,
Կամար խմբերից 30, Սաղամից Նէր 10, Կաղնի խաշ գիւղի խ. 39,
Վանդակ գ. խ. 35. 55, Ամբոց գ. խ. 47. 40, Խաշ. Հար-ից տող. 20,
Գետաբերան գ. Փարոս խ. 20, Վրէժ Ա. եւ Բ. 6. 20, Դարբին Ո. խ.
16. 50, Մարջիւն Գ. խ. 11. 60, Արշաւանք Ա. խ. 5, Լիժ խմբից 8,
Պանդուխտ Ա. խ. 24. 30, Բաքի խ. 31. 10, Բաքի Բ. խ. 6, 60,
Լիժ Բ. խ. 3. 50, Լիժ Բ. խ. անդամ իմանից Նէր 3, Բաքի Բ. խմբի
(աւետիքից) 17. 50, Հարիւր, Մարջիւն Բ. եւ Արդար խ. (աւետ.) 32,
Բաքի խ. (աւետիքից) 34. 50, Դժոխք Ա. խ. 20. 80, Գետ գիւղի
Մուս խ. 12. 40, Գետ գ. Զեպիսալ խ. 9. 80, Նոր Սեբուստ խ. 7. 20,
Կոնի խ. 6. 30, Ներկայացուց. տող. 1. 10, Նէրներ Կարտիզակ գ.
Ա.-Բէկից 10, Պարտիզակ գիւղի ուսուցչից 10, Պարտիզակ գ. հասար-
ակութիւնից 29. 88, Մետոն գ. Թ.-Բէկից 5, Նորաշէն գ. հասար. 40,
Նոսիսայ գ. մի քանի նւիրատ. 7. 20, Պարտիզակ գ. քահանայից 5,
Մետոն գիւղից 1. 60, Նամուս Բ. խ. 2. 80, մի պարոնից 10, Նոսիսայ
գ. Կայծակ խ. 8. 65, Վարդաշէն գ. Վիշապ ա., ք., գ. ն. ղ. խ. 5. 75,
Մամակի Առիւծ Ա., Բ. խ. 10, Մետոնի Արծիւ խ. 6. 70, Մամուտի
Աշոտ Բ. խ. 4. 35, Նամուս Ա. խ. 4, Մարջիւն Ա. խ. 34, Փինսան Ա. խ.
27, Թորգոմ Բ. խ. 2. 90, Շիրակ խ. 6. 50, Սալմաստ խ. 10,
ես 5, Մուռուտ գիւղի հասարակութիւնից Նէր 7. 55, Ն. խ. 7,
Բարձր-խաշ գ. Յոյս Ա. խ. 7, Գ. խ. 7, Մ. Խաշ-ից Նէր 3,
Դարբին խ. միջ. Նէր 9. 50, եւս 4, Արշաւանք Ա. խ. 7. 95, Զէյթունի
ընթ. խ. 32. 50, Զէյթունի ընթ. խ. միջ. Դար. յօրից Նէր 5,
Բերդաձորի Սրբեղծ Ա. խ. 3. 50, Վանդակի Բարակապ Ե. խ. 3. 60,
Կոնի Ա. խ. 9. 5, Գ. պարտիզակից Նէր 7. 15, Պարտիզակի Փայ-
լակ խ. 3. 10, Տեղուցի վաճան խ. 2. 20, Բարձր գ. Շահէն Ա. խ. 3.
40, Բ. խ. 3. 30, Բ. Պարտիզակից Նէր 5. 65, Ա. Պարտիզակից
4.-բէկից Նէր 5, եւս Գ.-բէկից 5, Ա. իւրաքանչիւր հայծիայ-
թած 3, Բարձր-գ. Նէր 7, Թորգոմ Բ. խ. 3. 20, Գետաբերանի Փարոս
խ. 20, Բարձր խաշի Յոյս Բ. 5, եւս 10, Դաշտավայրի Երկաթ Ա. խ.
1. 80, Բ. խ. 1. 80, Գ. խ. 60 կ. Պարտէզ գ. Ժաշիկ Ա խ. 4. 90,
Ոսկանապատ գ. Անահիտ խ. 6 50, Դժոխք Բ. խ. 10, Անիւից
Նէր 5, Մարջիւն Ա. խ. 14. 50, Դարձմանիւր Ա. խ. 20, Բ. խ. 8,
Ոսկեհանք Ա. խ. 7, Բ. խ. 6. 55, Փառանծեմ խ. 6, Աշոտ Եր-
կաթ խ. 5, Մամուտ գ. Զինուոր խ. 2. 50, Բարափ գ. Կարկուտ
Ա. խ. 4. Բ. խ. 4. Գ, 3, Դ. խ. 3, Ե. խ. 3, Նամուս Դ. խ. 10,
Անննուորթ գ. Հրայր (Դժոխք) խ. 1904 թ. ապրիլի 25. 75,
Սալմաստ խ. 5, Գետաբերանի Փարոս խ. 20 եւս 20, Նամուս
Ա. խ. 5, Ա. Փ.-ից իւրաքանչիւր 5, Դարձիւն խ. 14, Փինսան Բ. խ.
17. 25, Հարիւր խ. 5, Արշաւանք խ. 6. 80, Սամնոյ արիւծ խ.
4. 50, Հարիւր խ. 1904 թ. ապրիլի 16. 11, Ե. Շ. Դ.-ից Նէր
Բաժման Ղլիճի միջոցով 5, Ս.-ից Նէր Հրահատի միջոցով 6,
Նոյնից Նէր Ոսկանի միջ. 8, Մէկից 8, պ. Ա. Ս.-ից 1905 թ.
օտարեմտար 100, Շիրակ Ա. խ. 6. 10, պ. Եղայից Նէր 3000,
Շիրակ Բ. խ. 4, Նամուս Բ. խ. 3. 60, Երկաթ Բ. խ. 10. 80,
Բաքի Գ. եւ Դ. խ. (երեկոյթից) 20, Արճիւր Ա. խ. 3. 60,
Մուրճ Ա. խ. 8. 60, Կոնի Ա. խ. 8, Նամուս Ա. խ. 5. 30, Գ. խ. 2.
60, Արիւն խ. 5. 15, Խայի Բ. 5. 80, Ամրոցից, չայի ար-
ձից, ձորակից, ուխտատներից 40: Գումար 4794 ղ. 66 կ.

ՉԻՆԱՄԱՆՆ. ՅԱՆՆԱՄԱՄԱՆԻ 1905 թ.ի վերջուրի 23—սուրբիլի 1-ը:
Միւրսիցից յօգուտ տեղական պանեոսի մօտիկ 50, Աբրից 100,
Արտից 100, Հ-ից 100, 3-ից 50, Լ-ից 50, Դ. Լ-ից 100, Մի սիկնոյից
100, Վարդից 50, Թ-ից 120, Գեաւաւից 80, Աբ-ից 100, Մ-ից 35,
Մ. Ն-ից 100, Սպարանից 100, Մակիլից 200, Պ-ից 25, Տիկնոյից 5.
Եւ-ից 10, Նիկից 150, Աւետիքից 150, Թումանից 50, Վ. Մ-ից 50,
Ադ-ից 100, Պ. Ա-ից 60, Յովից 25, Գ. Խ-ից 25, Գեաւաւից 80,
Գումարանից 100, Մեքուրից 100, Գ-ից 25, Նիկ. Հ-ից 75, Մի պա-
րոնից 25, Ա. Կ-ից 50, Կ. Ա-ից 35, Մակիլից 70, Մ. Գ-ից 50, Սիմ-
օնից 10, Ամիրից 50, Ա. Մ-ից 25, Գ-ից 100, Միւրսուցից 30, Ա. Պ-ից
75, Տիկ. Հ-ից 50, Աբրահամից 50, Մ. Ա-ից 200, Բլլլլլից 25, Դար. 75.
Գումար 3390 ղ.

ՆԱԿԱՅԱՆԳՍԵՒ Կեդր. Կօճիտէն՝

Հանգանակութիւնից—Յակոբից 100 ռուբ. Մեխակից 50, Կիլիսից 25,
Բոյալից 15, Բերձից 100, Կ-ից 10, Տէր 15, Զինից 50, Յ. Փ. 25, Բայ 50,
Կ. Հ. 50, Զոնից 50. Ա. Աս. 50, Յ. Խ. 50, Գարիկից 50, Առոյից 200,
Նաբալից 25, Միհրանից 100, Յ. Բ. 50, Կ. Փ. 25, Փ. 25, Փոռից մի
կոր, Վ. Բ. 20, Կ. 30, Մ. 30, Ա. 25, Մ. 100, Մ. 50, Տիրուից 15, Ա.
Տ. 10, Բաբից 50, Տէր-Բ. 25, Ա. Կ. 50, Պ. Խ. 15, Բուլբուլից 25, Յա-
րուբիւնից 50, Բէգից 25, Բեօուուրից 50, Եղբայրներից 100, Զիլից
100, Ա. Պ. 25, Ա. Մ. 50, Սպայից 50, Թամարից 25, Սարուխանից 50,
Կ. Մ. 25, Նուրին Թարից 100, Բ. Տ. Մ. 10, Եղբ. Ա. 150:
Գումար 2380 ղ.

Տեղ. Ա. Կ. Ա. Կ. ՎՄԻՏԻՏԻ Յուլիս ամսւայ—Յոյս խ. անդ. Զ. ամսվն. 12,
Գետրգ Յուռուգի խ. 20, Առիւծ խ. անդ. Ֆ. Բ. Բ. 3, Մարտի խ. 32, Եր-
րաւս խ. 10, Կարին խ. Բ. Բ. 18, Կարին խ. 22, Խաչալիս խ. 25, Բազ-
րասունեան Տապան խ. 17, Մակախի խ. 123. 50, Աղբիւր խ. 9, Կարէ
խ. 58, Սիլիսի խ. 54, Բ. Բ. Բ. Բ. 14, 50, Ներբուր խ. անդ. Մ. Տու-
գան 1: Գումար 419 ղ.

„ԿԱՇՏ“ ԿՕՄԻՏԵՒ 1905 թ. յունւարի 1-ից մինչեւ յուլիսի 15:
Սուրբ 150 ռուբ. Հայկ 60, Արմենակ 90, Յակոբիկ 175, Սիւնեցի 100,
Բաբիկ-Բ. 90, Արարաւ 25, Զարմայր 60, Մեհենա 80, Մաախ 50,
Ալիսան 12, Կիւրեղ 12, Թալ 100, Մարիան 30, Մամիկ 40, Իրաւան
10, Լուսեղիկ 25, Լոյս 20, Բեկ 12, Աբրահամ 10, Վանեցի 25, Արսա-
ւազի 50, Զիրազ 25, Սպարապետ 10, Եղբայր գերմ. 200, հետեւալ
խմբերից՝ Կարթի. 18, Առիւծ 27, Բազալեր 40, Աւակեւր 3, Յոյս 16,
Աղիկ 14. 50, Վրէժ 48, Լորիկ 66, Յաւապալէմ 1. 50, Հայկապետ
77. 50, Աղբիւրեան 108; Ման 89, Անդրանիկ 6. 50, Խնկ 25, ՄԱՄԿ
ՎԱՂԱՎԻՏ Ալ. միջ. Վսակ խ. 132. 40, Եւս 18, Եւս 51, ԱՂ. ՎԱՂԱ.
ՎԻՏ Ղևնդեան խ. 294. 60, Արծիւ խ. 68, Արմուրի 59, Արակուր-
եան 54: Գումար 2683 ղ.

Ընդհանուր գումար 5482 ռուբ.

ՃԼԱՏԻ Կ. Կ.

Ճլատի Կ-ի յունիս ամս. հետեւեալ խմբ. Կարո 10. 50, ռուբ. Մարտ
7. 15, Արարաւ 10, Վազգէմ 2. 30, Թորգոմ Բ. 35, Պէ. 50 15. 10,
Մարտի վիճակ. 18. 20, Անդրանիկ 32. 15, Յոյս 12. 35, Արարաւ 10,
Շիկ-Աւանի Թուր. 11. 25, Կարո Երեկոյթից Եւ անսալմար 54,
Մարտի 5. 65, Թորգոմ Բ. 4. 10, Շամիլից Բ. Բ. 20, Նորածին
Ենթ. Կ-ի մնաց. առ 1-ն յունիսի 126. 96, Եւս անսալմար 100,
Բուժարան Կ-ի Արծիկի 22. 25, Յոյս 16. 75, Լեւոնի 16, Յ. Եր.
Բուր 10, Սեպար 19. 50, Աղիկ 4. 50, Լեւոնի 18, Յոյս 13. 75,
Վրէժ 9. 60, Կարիշ 7. 95, Արմենիկի 41. 85, Սեպար 39, Ամբուլ 53,
Լեւոնի 15. 50, Ամբուլ 27, Արծիւ Կ-ից 50, Կրեւացի Ենթ. Կ-ի Աւակա-
սաւեր խ. 3. 85, Արաւս խ. 3, Կուր Եւ Պատար. 34. 45, Արաւս Կ-ի
Հօրիկի 4, Կրակոս խ. 11. 50, Համր խ. 7. 50, Կարին խ. 7, Թուման
6. 25, Մեղայից Բ. Բ. 2, Պողոպասից 5, Հօրիկի խ. 4. Կրակոս 11. 50,
Համր 7. 50, Կարին 7, Թուման 5, Պողոպասից Բ. Բ. 5, Կայից Բ. Բ. 5,
Երեկոյթից 66. 20, Հօրիկի խ. 6. 50, Կրակոս 11. 50, Համր 7, Թուման
5, Փարուս 9. 30, Արծիւ 5, Աս. Կ-ի Մամիկեան 4. 50, Եւսուց
30, Կ. Պ. Բ. Բ. Բ. Բ. Բ. 25, Հանգանակութիւնից 2, Հօրիկի խ.
9. 50, Կրակոս 11. 50, Համր 7, Թուման 5, Փարուս 8. 30, Արծիւ 5,
Մամիկեան 4. 70, Եւսուց 15, Փարուս 32. 20:
Գումարն 1208 ղ. 41:

ԱՏՐԱՊԱՏԱԿԱՆԻ Կ. Կօճիտէն

Աստղի է Միմարէրու 1904 թ. հանգանակութիւնից Ա. Ա. 100 ղու.
Ա. Մ. Բ. 120, Պ. Մ. Պ. 80, Ա. Բ. 50, Ա. Կ. 100, Մ. Ա. 50, Կ. Յ.
50, Գ. Գ. 70, Ա. 20, Վ. Հ. 20, Հ. Օ. 10, Յ. Խ. 20, Պ. Ա. 50, Ա. Տ.
Մ. 10, Ա. Վ. 10, Ա. Վ. 10, Հ. Թ. 10, Խ. Մ. Հ. 20, Զ. Ա. 10, Մ. Դ.
80, Ա. Ա. 20, Գ. Վ. 10, Վ. Մ. 10, Գ. Մ. 10, Մ. 3. 10, Ա. Տ. 15,
Ա. Ա. 10, Ա. Բ. 70: Գումարն 1045 ղուման:

Միմարէրու 1904 թ. դեկ. 1-ից—1905 թ. յունիսի 1. հետեւ, խմբ.
Կարո 86, Զարեանդ, 91, Աղբակ 104, Զէյթունիկ 212, Զօլա 32.
25, Եւս 90, Արաւոյս 128, Խարիսի 42, Բրիտանիոյ Ա. խ. 12. 50,
Բրիտանիոյ Բ. խ. 26, Բրիտանիոյ Կանանց խ. 37. 50, Մի հեղափո-
յանից 866: ԴԱՄԱՍՍԱՆԻ ԵՆԹ. Բարբուրիլիքոս 111. 10, Գոյն խ. միջ.
Տիկ. Զարուհուց 99, Գոյտեան 116, Գոյն խ. Բ. Բ. 200, Գերիկ 217,
Տարածող 379, Ուսուցիչ 43. 50, Աւետիսեան 48. 50, Անդրանիկ 110,
Գոյն խ. հեղափոյանից 450, Արաւուլ 69. 50, Մուրեղ 51. 50, Լեւոն 89:
Գումար 3711 ղ. 35 կ.

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „DROSCIA K“, Genève (Suisse)